782

26 MAY 2005

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆ.

003
Հ-87

# ԳՐՉՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ
## ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

*Մ Ա Ս Ն Գ.*

# ՔԱՐՏԷԶ ՀԱՅ ՀՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(ՀԱՅ ԳՐԻ ԳԻՒՏԻ 1500 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

*95 ՏԱԽՏԱԿՈՎ.*

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Էլեկտրաշարժ Տպարան Ս. Էջմիածնի
1913

14 JUN 2013

782

# ՔԱՐՏԷԶ ՀԱՅ ՀՆԱԳՐՈՒԹԵԱՆ

95 ՏԱԽՏԱԿՈՎ

Հայ. ՀՍՍՌ Պետ. Գրադարան, Гос. Публ. Библиот. ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна

2011
38

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

1913

## ՔԱՐՏԷԶ ՀԱՅ ՀՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Տառերի գիւտի 1500 ամեայ տարեդարձը մի գեղեցիկ առիթ էր ցոյց տալ հայ գրի զարգացման պատկերն այդ երկար դարերի ընթացքում։ Հանգուցեալ Ալիշանի «Այրարատը», «Սիսականը», «Սիսուանը», Հ. Տաշեանի «Մայր ցուցակը», Բարամեանի և ուրիշ մանր ցուցակներ առանձին տետրակներով և «Հանդէս Ամսօրեայ» ի մէջ, Մեսրովբ վարդ. Տ. Մովսիսեանի История Перевода Библіи, Franz Nicolans Finck-ի Armeniche Palaeographie ևն. տալիս են շատ գնահատելի նիւթեր, բայց նոքա բաւարար չեն հայ գրչութեան արուեստի զարգացման, նորա ճոխութեան, և հարստութեան մասին ամբողջական գաղափար կազմելու։ Այդ հնարաւոր չէ և այժմ, քանի ձեռքի տակ չունինք հայ ձեռագիրների գլխաւոր ժողովածուների՝ Ս. Աթոռի, Երուսաղեմի Ս. Յակոբեանց, Վենետկի Մխիթարեանց մատենադարանների՝ գիտնական ցուցակներ և վանքերի արձանագրութիւնների նոյնատիպ հրատարակութիւններ։ Ներկայումս միայն մի համեստ փորձ ենք անում հայ գրչութեան արուեստի զարգացման ուրուագիծը տալ, օգտուելով գլխաւորապէս Ս. Աթոռի և մասամբ Երուսաղեմի Հայոց մատենադարանների անբաւ գանձերից։

Այդ աշխատութեան Գ. մասն է «Քարտէզ Հայ հնագրութեան-ը», որ հրատարակուեցաւ նախ «Շողակաթ» հայագիտական ժողովածուի մէջ և այժմ լոյս է տեսնում առանձին գրքով, բարեփոխած և ճոխացրած։ Այստեղ իւրաքանչիւր պրակի վերջում դրել ենք Տախտակի թուահամարը, ցանկացող պատկերը աւելի դիւրութեամբ գտնելու համար և ցոյց տալ լոյս տեսած աղբիւրները՝ յատկապէս արձանագրութիւնների վերաբերութեամբ։ Ներկայ հրատարակութեան մէջ աւելացած են մի քանի պատկերներ, որոնցից երեքը լրացնում են մեր նշագրերի երկրորդ բառարանը (առաջինը պատկեր 139, 140, 141 Տախտակ ԶԸ. ԶԹ. Դ.), որ անհրաժեշտ է Հայ հնագրութեամբ կամ ձեռագիրներով զբաղուողի համար։

Մեր ընտրած օրինակներով երկու նպատակի ենք հետևել. նախ Հայ գրչութեան և ապա նշանաւոր գրիչների և դպրոցների մասին գաղափար տալ՝ այս արուեստի զարգացման ընթացքում. Մեր քարտէզը բաւարար կարելի է համարել Հայ գրչութեան պէսպիսութիւններն ու զարգացումը մինչև ԺԵ. դարը պարզելու համար, բայց ԺԷ.

դարու վերածնութեան շրջանի և գաղթավայրերի դպրոցներից օրինակներ չենք բերել, առանց այն էլ մեր ստուարացած գործը աւելի ևս չ՛ընդարձակելու։ Այդ պակասը մենք մտադիր ենք լրացնել շատ փոքրիկ օրինակներով գրչութեան դպրոցների մասին խօսած ժամանակ։ Յամենայն դէպս՝ Բարտէզի ամբողջութեան համար նոքա կարևոր նշանակութիւն չունին, որովհետև ԺԴ. դարուց յետոյ խիկապէս Հայ գիրը այլ ևս չի զարգանում, եթէ չ՛յիշենք առօրեայ գործածութեան շեղագիրը, որ աւելի դիւանագիտութեան (Diplomatie) է վերաբերում, քան գրչութեան արուեստին։

Բացի ձեռագիրներից տալիս ենք և հնագոյն արձանագրութիւնների օրինակներ, որոնց նոյնատիպ հրատարակութիւնը առաջին անգամն է կատարւում. նոքա բաւական չեն հնագրական հարցերին բաւարարութիւն տալու, որքան արձանագրութիւններին է վերաբերում, և այդ էլ չէ նրանց ժողովածուիս մէջ առնելու գլխաւոր պատճառը, այլ լրացնել այն պակասը, որ ունինք հայ հին ձեռագիրների կորուստով։ Է. դարու մի քանի ուրիշ արձանագրութիւնների համար՝ Բագաւանի, Բագարանի, Նախճաւանի, Ալամանի, Մրենի, մատնացոյց ենք անում Յովսէփ Օրբէլիի յօդուածը, որ նորերս հրատարակեց Христ. Востокъ-ի մէջ. Томъ II. выпускъ I. СП. 1913., աւելորդ համարելով նրանց կրկնութիւնն ժողովածուիս մէջ (Բագաւանինը չունինք)։ Մրենի արձանագրութիւնը կրկնուած է մեր Բարտէզում, որովհետև կլիշէն արդէն նախօրօք պատրաստ էր։ Հարկ համարեցինք նաև տարբեր նիւթերի վերայ եղած գրութիւնների մի քանի օրինակներ տալ, մանաւանդ որ նրանք հաջուագիւտ են։

Պատկերները և նրանց համառօտ բացատրութիւնները համարակալուած են ժամանակագրական կարգով՝ նիւթի տեսակաւորութեան համեմատ (քար, որմանկար, մետաղ, ձեռագիր), իսկ ընդհանուրի համար կազմուած է յատուկ ժամանակագրական Ցուցակ։ Բայց պատկերների և տախտակների դասաւորութիւնը տարաբախտաբար հնարաւոր չեղաւ այս կամ այն կարգաւորութեան ենթարկել, տեղ խնայելու և մասամբ երես կապելու դիւրութեան նկատումներով։ Ով կամենում է նիւթի կամ ժամանակագրական տեսակէտով հետևել պատկերներին, պէտքէ վերոյիշեալ Ցուցակներով առաջնորդուի։

---

**1.** Մողայիկ արձանագրութիւն Ձիթենեաց սարի վերայ։ Սոյն նկարն առնուած է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի սրահում չափագրութեամբ և հարազատութեամբ պատրաստուած իւղաներկ պատկերից։ Երուսաղեմի մողայիկ հայ արձանագրութեան լուսանկարչական մի նմանահանութիւն տպագրուած է Zeitschrift des Deutschen Palästina Vereins, Band XVIII մեր նկատողութիւնների հետ, ուր այն կարծիքն ենք յայտնել, թէ առնուազն Թ—Ժ դարու գիր պէտք է համարել. այժմ ընդունում ենք ոչ ուշ, քան Զ—Է դարերի։ (Մողայիկների գիւտի և արձանագրութիւնների մասին Տես. Նոր-Դար. 1894 № 134։ Արևելք. 1893. № 2702) ԳԻՐԸ բոլորաձև, միջակ մեծութեամբ երկաթագիր է։ Տախտակ Ա.

Բարեխաւս ունելով
առ Ա. Ծ զսուրբ Ի
սայի եւ զերանելի
\+ Հարսս ես Վ.աղան ա
բարի վասն Թողու
թեան մեղաց զսի
շատակարանս զայս.

**2.** Տեկորի արևմտեան դրան ճակատի արձանագրութիւնը, որ կիսատ է առաջի մասում։ Այս արձանագրութիւնը համարւում էր գրի ամենահին մնացորդը Հայոց մէջ (Ալիշան. Շիրակ. 132, սխալ ընթերցուածներով, Մեսրոպ վարդ. Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ. Էջմիածին. 102. տես և Կոստանեանց. Վիմական տարեգիր. Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց. Ս. Պետերբուրգ. 1913 եր. 1 )։ Բայց տարակոյսներ կան սկզբնագիր լինելու մասին (Թորամանեան. Տեկորի տաճարը 1911. Թիֆլիս. եր. 99։ Н. Я. Марръ. տես. Կոստանեանցի վերոյիշեալ երկի Յառաջաբանը՝ отъ Редактора եր. IX.)։ Գրերի ձևին նայելով, պէտք է ոչ ուշ, քան Է. դարը համարել. արձանագրութեան մի բեկոր սորա Ա-ի նման ձևերով տեսել ենք Թալինի գերեզմանատանը։ Արձանագրութեան մեծութիւնը առաջին երկու տողի 2 մ. 70 սմ.×10½ սմ., երրորդ տողի 1 մ. 90 սմ., վերջին տողի, աւելի խոշորգրերով, 1 մ. 75 սմ.×6սմ.։

Արձանագրութեան վերարտադրութիւնն անբաւարար է, մանաւանդ վերջին տողը խակակմում (original) ևս փչացած լինելու պատճառով։ Տախտ. Բ.

1. ...պ(իսկո)պոսի եւ Տայրոնի Տեկորոյ վանաց երիցու
եւ Մանանայ հազարապետի Ուրանայ Հոռոմի. որ

2. եւ հիմնարկեցաւ սեղսս ի ձեռն Յոհանու Հայոց
կաթողիկոսութեան եւ Յոհանու Արշարունեա(ց)

3․ յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգին եւ
ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց եւ
4․ Սահակ Կամսարական շինեաց զ(այ)ս վկայարան
սրբոյ Սարգսի (վերջին երկու բառը գրուած «վկայարան» բառի գլխին, տողամիջին)։

Տայրոնի, Մանանայ բառերի մէջ ընդգծուածները աղօտ. փակագծի մէջ առնուած տառերը կոտրուած են, լրացնում ենք։

**3.** Ս. Հռիփսիմէի տաճարի արեւմտեան պատի ճակատին դրսից՝ Կոմիտաս կաթողիկոսի մեծ արձանագրութիւնը (փոքրը խորանի պատի վերայ ներսից)։ Ամբողջ արձանագրութիւնը փորուած է մի քարի վերայ, 50×200 սմ. մեծութեամբ։ Բարի մակերեւոյթին ժամանակի ընթացքում փոսեր են գոյացել, երբեմն վնասելով տառերը։ Բայց ընդհանուր առմամբ արձանագրութիւնն անվնաս է և մեզ պարզ գաղափար է տալիս գրերի ձեւի մասին, որ խոշոր, բոլորաձև և գեղեցիկ երկաթագիր է։ Թուական չունինք. բայց ժամանակակից և ականատես հեղինակներից յայտնի է մեզ շինութեան, աւել է թէ, և արձանագրութեան ճիշտ տարին։ Սեբէոս և նրա հետ Գիւտ նշխարաց Հռիփսիմեանց (շուտով հրատարակելու է հ. Գալուստ Տ. Մկրտչեան) գրութեան հեղինակը շինութեան ժամանակը դնում են Խոսրով Ապրուէզի 28-րդ տարին, իսկ Եզնակ երէցը 29-րդ տարին նոյն թագաւորի։ Այս տեղեկութիւնների մէջ հակասութիւն չկայ, երկուսն էլ հաւասար են Փրկչական 618 թուականին, միայն տարբեր ձեւով հաշուած։

(Սեբէոս Պոլիս 1851 եր 139. և Ձեռ. Մատ. Ս. Էջմ. № 1753|1912. 175ա.։ Եզնակ երէց. Սամուէլ Անեցի. ա. հրատ. Արշակ Տ Միքէլեանի, Վաղարշապատ, 1893. եր. 266 ։ Նոյնը ունինք մենք Ջահրաբի արտագրութեամբ՝ համեմատած Տ. Կարապետ եպիսկոպոսի արտագրութեան հետ, որ կատարել է անձամբ Փարիզում Ազգային մատենադարանի Cod. 51. Ձեռագրից։ Տես և մեր յօդուածը Կոմիտասի արձանագրութիւնների մասին. Արարատ 1898 Հոկտ ։ Շահխաթունեան Ա. 264։ Ալիշան. Այրարատ. 238։ Մեսրոպ վարդ. Էջմիածին և այլն 96։ Կոստանեանց. Վիմական տարեգիր. 2.)

Արձանագրութեան մեծութիւնն է 50×196 սմ , մեր նկարը 17½×6սմ.։ Առաջին տողի մէջ «Կոմիտաս» բառում մի, երկրորդ տողում. «Հռիփսիմէի» բառի սի և մէ վանկերը միացած։ Տախտ. Բ ։

1․ Ես Կոմիտաս եկեղեցապան սր-
2․ բոյ Հռիփսիմէի կոչեցայ յա
3․ թոռ սրբոյն Գրէգորի․ շինեցի
4․ զտաճար սրբոց վկայիցս Ք̃ի․

**4.** Անիի Միջնաբերդում, Կամսարականների բազիլիք եկեղեցու հարաւային պատի արձանագրութիւնը 622 թուականից, եթէ արձանագրութեան «ՀԱ» վերջին տառերը թուական ընդունենք։ Պրոֆ. Մառ սկզբում կասկա-



ծում էր, բայց յետոյ իւր կասկածը յետ առաւ *։ Մենք ես հակուած ենք թուական ընդունելու, որով հայ թուականի ամենահին գործածութիւնը կունենանք։ Արձանագրութիւնը հետեւեալն է. ընդգծումները շատ աղօտ են կամ ենթադրութեամբ լրացած։ Տախտ. Ա.

(Ե)ս Աբրահամ | վարդապետս շինե | ցի
զեկեղեցիս զայս ի թո | ւականութեան ՀԱ․

**5.** Ներսեհ Կամսարականի արձանագրութիւնը Թալինի խաչաձև մատրան արեւմտեան ճակատին, է. դարու առաջին կիսում, հաւանօրէն վեց հարիւր երեսնական թուականներին, բոլորաձև, խոշոր և գեղեցիկ երկաթագրով։ Արձանագրութիւնը պակասաւոր է մի քար ընկած լինելու պատճառով, որի վրայ քանդակուած էր նաև լուսամուտի գլխի զարնէզը։ Ներսեհ Կամսարականի անունը յիշւում է նաև Ալամանի, Մրենի և Նախճաւանի եկեղեցիների արձանագրութիւնների մէջ։ Ալամանի արձանագրութիւնը թուագրուած է, «Բսան եւ եւթն ամւոյ (sic) Հերակլի բարեպաշտ թագաւորի Ներսեհի Շիրակայ եւ Աշարունեաց․․․» տ. և Христ Востокъ. Т. II. вып. I. СП. 1913 եր. 131. յօդուած I. A. Орбели ի։ Փակագծերինը մեր յաւելումներն են, ընկած քարի տեղը։ (Տես. Շահխ. Բ. 50։ Ալիշան Այր. 137. Կոստանեանց Վիմական տարեգիր 2.)։ Տախտ. Ա.

+ Ես Ներսեհ ապոհւպատ պա(տրիկ Շիր)ակայ
եւ Աշարունեաց տէր շի |
նեցի զեկեղեցիս յանուն սրբ(ո)յ Աստուա-
ծածնին ի բարեխաւսու |
թիւն ինձ եւ Շուշանայ ամուսնոյ իմոյ
եւ | Հրահատայ որդւոյ մերոյ։ +

**6.** Մրենի արձանագրութիւնը, տաճարի արեւմտեան պատի ճակատին, տարաբաղդաբար թերի նաև այն մասում, ուր թուագրութիւնն է։ Հակառակ ընդհանրացած կարծիքի Մրենի տաճարի շինութիւնն ընդունում ենք կատարուած վեց հարիւր երեսնական թուականների վերջերին, Դաւիթ Սահառունու կուրապաղատութեան ժամանակ 638—640 թթ.ին (Համ. և Христ. Востокъ. Томъ II, выпускъ I. СП. 1913. եր. 132)։ Առաջին տող սկզբից և վերջից պակաս, թերի է և վերջին տողը մենք ենք լրացնում փակագծի մէջ առնուածը։ Միւս լրացումները առաջին և երկրորդ տողերում պակաս են, լուսամուտի աջ կողմից մի քար ընկած լինելու պատճառով։ Առաջին տողի սկզբում թուագրութիւնն էր Հերակլի թագաւորութեան տարիներով։ (Տես. Ալիշան. Այր. 114։ Կոստանեանց. Վիմական տարեգիր. 2.) Տախտ. Գ.

Արձանագրութեան բնագիրն է.

1․ ․․․ որդի Հերակղի բարեյաղթող թագաւորի յիշ-

---

* Н. Марръ. Раскопки въ Ани. въ 1904 году. Сп. 1906 եր. 19. Новыя археологическія данныя о постройкахъ типа Ереруйской базилики. З. В. О. XIX. Отдѣльный Оттискъ. եր. 14։

խանութ՟ե . . . (Գաւթի ա) մենագով պատրկի կու-
րապաղատի եւ սպարա(պետի Հա)
2· ոց եւ Ասորւոց եւ յեպիսկոպոսութեանն սրբա
(սիրի Թե) ովփիղոսի եւ ի տանուտերութեան Ներ
սե (Հի Շիրա)
3· կայ եւ Աշարունեաց տեառն շինեցաւ սուրբ
եկեղեց(իս ի բարեխաւս)ութիւն կամսարականաց
եւ Մրենոյ ամեն...

**7. 8.** *Մաստարայի արձանագրութիւնները շինութեան ժամանակից հինգ են, բայց այստեղ իբրև գրութեան օրինակ մէջ ենք բերում երկուսը. առաջինը եկեղեցու հարաւային թևի (խաչաձև դրսից) լուսամուտի գլխին, երկրորդը նոյն թևի արևմտեան պատին և երկու տողն էլ արևմտեան թևի հարաւային պատին։ Արձանագրութիւնները որոշ տեղերում փչացած են, անընթեռնլի։ Հարաւային պատի արձանագրութիւնը թուագրուած է Գնունեաց (Գնթունեաց ?) Թեոդորոս եպիսկոպոսի անունով, որ մասնակից էր Ներսէս Գ-ի նախագահութեամբ 648 թուին գումարուած Դուինայ ժողովին։ Ուրեմն արձանագրութիւնները պէտք է* Է. դարու երկրորդ քառորդի *գործ համարել։ (Տես. Շահխ. բ. 46. 47։ Ալիշան. Այր. 135։ Կոստանեանց. Վիմական տարեգիր եր.3) Տախտ. Դ. և Ե.*

*Առաջին արձանագրութիւն։*

1· Ցամս տ՟ն Թեոդորոսի
2· Գնունեաց եպիսկոպոսի
3· շինեցաւ ա՟ծային տունս
4· քաւել զԳրիգորաս ան
5· ար ժան
6· .. ա ծ(?) գթա ի Գրիգորաս մեղաւոր եւ ինձ
կեփ . . . *(այս տողը կիսաշրջանաձև լուսամուտի կարնիզի գլխին)։*

*Մաստարայի երկրորդ արձանագրութիւն։*

1· + Գոհանամ ա՟յ որ ետ ինձ Գրէ
2· գորասայ սիւնիսի(?) եւ ըղձացե
3· լոյ որդւոյ եղբաւր Գրիգորի
4· շինել զ(տաճար փ)առաց եւ սովաւ
5· . . . էպիսկոպոս Ապահունեաց



6· *(արևմտեան թևի վերայ)* սա է ապ . . . ազգա
7· աւ(?) աղաւթարան արդարոց քաւարան
8· *(արևմտեան թևի վերայ)* մեղաւորաց յիշատ
9· ակարան ինձ եւ ի մ(ոց) եւ որք աղաւթէք
(զ)մեզ յիշեցէք

Առաջին արձանագրութիւն, *Առաջին տող. «տ՟ն» սղագրութեամբ. «Թեոդորոսի» բառի մէջ* ոս *միացած։ Երկրորդ տող. «Գնունեաց և «եպիսկոպոսի» բառերի մէջ,* ու, պի, *միացած։ Առաջնի Ո-ի կամարի տակ մի գծիկ կայ, որ մտածել է տալիս, թէ կարող է* թու *լինել, որով «Գնթունեաց» կկարդացուի։ Երրորդ տող. «շինեցաւ», ընդգծուածը միացած, «ա՟ծային» սղագրութեամբ։ Վեցերորդ տող սկզբից պակաս (Ե՟ս ա՟ծ ?), «մեղաւոր» բառի մէջ «ղ» մաշուած։*

Երկրորդ արձանագրութիւն, *Առաջին տող. «Ա՟յ» սղագրութեամբ։ Չորրորդ տող «շինել» բառի մէջ ընդգծուած տառը հազիւ նկատելի։ Հինգերորդ տող. «էպիսկոպոս» բառի մէջ ընդգծուած տառերը հազիւ նկատելի։ «Ապահունեաց» բառի ընդգծուածը միացած կամ փակագրով՝ տեղ չլինելու պատճառով։ Փակագծի տառերը փչացած, լրացնում ենք։*

**9.** *Գրիգոր Մամիկոնեանի արձանագրութիւնը Արուճի Ս. Գրիգորի արևելեան պատի վերայ, գրուած 668 թուին։ «Ի եւ Թ ամի Կոստանտնի» թուագրութիւնը համարում ենք ճիշդ (հակառակ.* I Орбели. Багаванская Надпись *639* г. *ևն.* Христ. Востокъ Т. II. *եր. 138—142)։ Արձանագրութեան մեծութիւնն է 127×62 սմ.։ (Տես. Մեսրոպ վարդ. Էջմ. և հայ հնագոյն եկեղեց. 110։ Մխիթար վարդապետ.* Zeitschrift der arm. Fhilologie 1903. 40—41.*)*

*Երկրորդ տող. «աւր» բառի մէջ ր կտրուած է։ Արձանագրութեան տակ «ողորմեա ք՟ս ա՟ծ» յետին ժամանակի գրուածք է։ Տախտ. Զ.*

Ի եւ Թ ամի Կոստանտնի մարե
րի ամսոյ որ աւ(ր) Ժ եւ Ե հիմն
արկեցաւ սուրբ կաթողիկէս
ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի
Հայւոց իշխանի եւ Հեղինէ
ի Նորին զուգակցի
ի բարեխաւսութիւն շինաւ
ղաց զսա։

**10.** *Արտաւազդ Կամսարականի տապանի արձանագրութիւնն է։ Կարծում ենք Հրահատայ որդի Արտաւազդը Ներսեհ Կամսարականի թոռն էր և վախճանուել է Ը. դարու առաջին քառորդին (Տես և Էջմ. և հայ հնագոյն եկեղ. Մեսրոպ վրդ. եր. 105)։ Տապանի վերին մասը բութ օրօրոցաձև է, որ յատուկ էր արաբական շրջանի գերեզմաններին։ Երկարութիւնն է 2 մ. 47 սմ., իսկ արձանագրութիւնը (կափարչի հարաւ նայող կողի վերայ)*

1 մ. 75×50 սմ.։ Վերարտադրութիւնը շատ անբաւարար է, կորած են տառերի բնորոշ և նուրբ գծերից շատերը. լուսանկարուած է էստամբաժից, անյարմար պայմաններում։ Գերեզմանը գտնւում է գետնայարկ կամարի տակ։ (Տես. Ալիշան. Շիրակ 136։ Մեսրոպ վարդ. Էջմ. և հնագոյն եկեղ. 105։ Կոստանեանց. Վիմական տարեգիր 3.)։ Տախտ. Ե.

1· + Ա՞ծա հրամանաւք եւ ք՞սակոչ հրաժարման (sic)
2· մամբ ի սմա է հանգուցեալ ընդ հարս իւր
3· երանելի տ՞ր Արտաւազդ կամսարական ապա-
հիւպատ
4· պատրիկ եւ իշխան հայոց որդի Հրահատա
5· պատրկի Շիրակայ եւ Աշարունեաց տ՞ն՞ն եւ
6· ամուսին Շուշանայ Մամիկոնենի·

Առաջին տող. «Ա՞ ծահրամանաւք», «Ք՞սակոչ» բառերի մէջ ընդգծուածները կրճատ։ «Հրաժարման» բառի մէջ ընդգծած մասն աւելորդ։ Երկրորդ տող. «ընդ»-ի մէջ ը-ի գլխիկը փչացած։ Երրորդ տող. «տր» կրճատ։ Հինգերորդ տող «տ՞ն՞ն» կրճատ։

**11.** Ոսխտատուր վանականի արձանագրութիւնը 783 թուականից Թալինի Մայր եկեղեցու ձախակողմեան սեան արևմտեան երեսին։ Արձանագրութիւնը գրուած է բոլորաձև, ուղղանկիւն երկաթագրի, երբեմն և բոլորգրի ու շեղագրի ձևերով, որով և առանձին ուշադրութեան արժանի։ Եթէ չ'հաշուենք Անիի Միջնաբերդի եկեղեցու Աբրահամ վարդապետի արձանագրութիւնը, սա առաջինն է, ուր գործադրուած է Հայոց թուականը։ (Տես. Ալիշան. Այր, 139։ Կոստանեանց. Վիմական տարեգիր. 2.)

Արձանագրութեան մեծութիւնն է 100×51 սմ., մեր նկարը 71½×18½ սմ.։ Տախտ. Է.

1· ՄԼԲ թուակ(ա)նութեան Հայ
2· ոց ես Ոսխտայտուր վանա
3· կ(ա)նս եւ Տուտի եղբայր իմ բե ր
4· աք (զ)աղբիւրանիս ի Քարկապ(ա ?)
5· Նուս ? առեն ի Թալին· թե յիշխ(ա)
6· նաց ոք խլե իմ մեղացս (պար)
7· ը(տ)ական եղ(ի)ցի·

Առաջին տողում փակագծի մէջ եղած ա մենք ենք աւելացնում, կոտրուած է, չի երևում։ Երրորդ տողինը նոյնպէս. նկատելի է Ն-ն միայն կիսով չափ. վերջին ր կոտրած է։

Չորրորդ տողում. առաջին Է երևում է կիսով չափ. գ մենք ենք աւելացնում ենթադրութեամբ, մի տառի տեղ մաշուած է արձանագրութեան



մէջ. «Քարկապա | Նուս» բառի մէջ Է նկատւում է, թէև աղօտ. պ-ին կից է երևում մի տառի մաս, որ ա ենք կարծում։

Հինգերորդ տողում Նու վանկի մէջ երևում է քիչ Ն-ի ներքին մասը. առեՆ (ամեն ?) բառից առաջ ւ-ի նման տառի մնացորդ է երևում. Շ-ի գլխիկը հորիզոնական մի գիծ է առանց ցած իջնող մասի, այդ պարզ է թէ արձանագրութեան և թէ մեր լուսանկարի մէջ, որով շ շեղագրի սկզբնաձևն է։ Փչացած է խ-ի բնորոշ գլխիկը. ա չի երևում։

Վեցերորդ տողի Ն չի երևում. պար կոտրած է։

Եօթներորդ տող. տ-ի վերին գլուխը միայն նկատելի. Ն եղծուած է, փակագծի ի-ն կոտրած։

**12.** Արուճի Ս. Գրիգորի վերայ Վաւամա որդի Գրիգորի արձանագրութիւնը ձախ դասի արևմտեան պատի արևելեան երեսին, 867 թուականից։ (Տես. Շահխ. բ. 61։ Ալիշան. Այր. 144։ Կոստանեանց. Վիմական տարեգիր 3)

1· ՅԺԶ թուականին Հայոց յի
2· շխանութ՞ի Աշոտոյ եւ ի տերութ՞ի Սմբատայ
3· Հաոց ասպարապետի Բագրատունոյ եւ ի կաթողիկո
4· սութ՞ի Զաքարիաի եղեւ կռիւ ընդ Յարուճ եւ
ընդ Կոշ եւ
5· ընդ Գաւառն· եհար Արուճ զԿոշ եւ զԳաւառն
եւ կալաւ
6· զԿոշա վանականն եւ ի Քրթավանին ընդ անկին
մինթա
7· Նի! վաճառեցին· ես Գրիգոր որդի Վաւամա
ծառա Ա
8· մբատա Բագրատունո եկի հրամանաւ Սմբատա
եւ ես
9· հաւասարեցի զՋուրն ընդ Կոշ եւ ընդ Յարուճ գին
10· չ իւրեանց ընիկ ռամ էր լեւ։ Ա։ եւ կէս Կոշա
եւ։ Ա։ Արճ
11· ո· արդ եթէ այլ ոք հակառակել ջանա այլ
աւելի ռ
12· ամ յուղէ։ ՅԺԸ։ սուրբ հայրապետացն նզեւ
լիցի եւ
13· ի Սմբատա մահուամբ (բաց) պատուհասի,

Ուշադրութեան արժանի են երկրորդ և երրորդ տողերի մէջ թիւն վերջաւորութեան պատուով կամ կրճատ գրութիւնները. հնագոյնը հայ արձանագրութեան մէջ, բացի «Ա՟ծ, Ք՟ս» բառերից: Տախտ. Ժ.

**13**. Թալինի Մայր եկեղեցու արձանագրութեան մի կտոր 831 Թուականի, որ Էջմիածին է բերել Տ. Խաչիկ ծ. վարդապետը: Քարի մեծութիւնը 54×16 սմ. է և մեր նկարը $13\times10\frac{1}{2}$ սմ:

1· ՅԾ Թվակա..
2· յ՟այ Աշոտի բ..
3· Նի եւ ազատե..
4· իւր հոգեց եւ վ..
5· բոթեն մա..

Երկրորդ տող. «յ՟այ» կրճատ: «Աշոտի» բառի մէջ շ անսովոր ձեւով, բոլորաձև մասը շրջած հակառակ կողմը: Տախտ. Ը.

**14**. Ագարակ գիւղի եկեղեցու գերեզմանատանը Սահակ Իրիցորդոյ տապանի արձանագրութիւնը 941 Թուականից. Նկարուած է միայն արձանագրութեան մի մասը, քարի հարաւային կողի վերայ, որպէս օրինակ անվարժ արձանագրական գրչութեան: Գերեզմանը օրօրոցաձև է, մի աստիճանի պատուանդանով, որ նոյն քարի մասն է: Երկրորդ տողի մէջ ան փչացած: Տախտ. Ժ.

Այս է հանգիստ... (ողնաշարի վերայ) |
Դէ Սահակ Իրիցորդոյ |
Թվական ՅՂ.

**15**. Տեկորի գերեզմանատան խաչքար 964 Թուի, որ հետաքրքրական է գրի անսովոր և շեղագրին մօտեցող ձևերով: Հարցականով նշանակուած տառն անընթեռնլի: Տախտ. Թ.

+ Թ: ՆԺԳ.
+ ես ?ատապ ծառա ա՛յ որ | կազմեց|ի
զխաչս | զայս

**16**. Վայոց Ձորի Խոտակերաց կամ Բարկուշի վանքի արձանագրութիւնը 910 Թ.: Տարաբաղդաբար արձանագրութիւնը շատ է խանգարուած, և տեղն ու տեղը ժամանակի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունեցանք վերծանելու. հետաքրքրուողները կարող են ի նկատի ունենալ Օրբէլեան. Ա. Փարիզ. եր. 582: Բաշբերունի. Ճանապ. նկատողութիւնք. Արարատ 1889. 523. Կոստանեանց. Վիմական տարեգիր 6. և Ալիշան. Սիսական եր. 69: Վերարտադրութիւնը աղօտ է, ինչպէս իսկականը, բայց հետաքրքրական է իբրև միակ արձանագրութիւն, որ փորագրուած չէ, այլ գծերով միայն ծռուած: Տախտ. Թ.

**17** Գրիգոր Համզէ Պահլաւունու արձանագրութիւնը Ժ. դարու երկրորդ կիսում, Անիի Ապուղամրենց Ս. Գրիգորի արեւելեան պատին: Ա-ի այս ձևը Ժ. դարից յետոյ չի կրկնւում: (Տես. Ալիշան Շիրակ. 53.): Տախտ. Ժ.



+ Ք՟ս ա ծ յորժամ | գաս փառօք (sic) հաւր
ի Նորոգել զերկիր | ողորմեա Գրիգորո ծա |
ռաի քո.

**18** Կեչառուաց Սուրբ Աստուածածնի տաճարի հարաւային դրան կամարակալ քարի վերայ Հասանայ որդի Գրիգոր Մագիստրոսի արձանագրութիւնը 1003 Թուականից, քարի գրութեան ամենագեղեցիկ օրինակներից մէկը: Թուականի տասնաւորը կարելի է միայն Ծ ուղղել, Թագաւորի և կաթուղիկոսի անունն ի նկատի ունենալով, թէև Զ է գրուած: (Տես. Շահխ: բ. 192. Ալիշան. Այր. 259 Ն. Լալայեան. Ազգ Հանդ. XXIII 1912. 12: Կոստանեանց. 18): Տախտ. ԺԱ.

1· + ՆԶԲ Թ. Հա. ի Թագաւորութե
2· ան Գագկա եւ ի հայրապետութեան տ Ն
3· Սարգսի ես Գրիգոր մագիստրոս որդի Հասան
4· աշինեցի զեկեղեցիս ինձ ի բարեխօսութ՟ն (sic) եւ ի
5· մ պատրոնին եւ իմ որդեացն. որք ընթեռնոյք զ
6· իս յաղաւթս յիշեցէք ի Ք՟ս աղաչեմ

Երրորդ տողի «Գրիգոր» բառի մէջ վերջին երկու տառերը միացած են: Հինգերորդ տողի «որդեացն», «որք» բառերի մէջ ընդգծուած տառերը միացած են:

**19**. Երերոյքի արձանագրութիւնը հարաւային դրան գլխին 1028 Թուականից: Գրութեան այս ձևը տարօրինակ է, բայց ոչ բոլորովին հազուագիւտ ԺԱ. դարում: Այստեղ խառը գործադրուած են երկաթագրի, բոլորգրի և շեղագրի ձևեր: Արձանագրութեան մի մասը թափուած է գետին, բայց մենք չենք նկարել: (Տես. Շահխ. Բ. 44: Ալիշան. Շիրակ. 17. Կոստանեանց 21): Տախտ, ԺԲ.

1· + Յանուն ա՛յ ի Թվականիս
2· ՆՀԷ ես բարեպաշտ Թագուհիս
3· դուստր Աբասա Սմբատ Շա
4· հանշահի կնիս եւ Աշոտոյ մ
5· այրս որ ազատեցի զԵրերվաց Թաստ
6· ակսս յորդէց յորդիս Սմբատ Շահան
7· շահանի (sic) հզուրի (sic) եւ արքաի արեւշատու
8· Թեան եւ Աշոտոյ եւ....

**20**. Վէտո Սարգսի արձանագրութիւնը 1033 Թուից, Խծկոնից Ս. Սարգսի

հիւսիսային պատին: Ուշադրութեան արժանի է այս արձանագրութիւնը իւր շատ խոր փորագրութեամբ: Երեսը ներկուած է հաւանօրէն ԺԳ դարում, որ անսովոր երեւոյթ չէ: (Տես. Ալիշան. Շիրակ. 126: Կոստանեանց. 17): Տախտ. ԺԱ:

1–4· Ցանու|Ն ա՜յ ՆՁ | Բ Թուա|կանիս

5· հաոց տ՟Ն Պետրոսի հաոց կաԹողիկոսի եւ ի Թագաւորութեան

6· Սմբատա Շահանշահի որդւո Գագկա Շահանշահի ժամանակի,

7· որ եր որդիացեալ եւ սիրեղի ճորտ Սարգիս: Գ:ից Թագաւորաց Հոււոմ

8· ոց առեալ: Գ:ից պատիւ անԹիպատ պատրիկ, վէստ եւ դուկ արեւելից· արդ Հր

9· ամենաւ սոցա կամ եղեւ: Բ: յեղբարց որդւոցս Եզդու Ապլ Հասնա եւ Խատապ

10· ա տալ զմեր արկեալ եգին որ ի Գագկաւնս յեզերն Երասխա ի վանքս Տեկորո

11· արեւշատութեան շաի (վերջին բառի վերան կէտեր. Շահանշահի, թէ ջնջուած) եւ դուկիս մեր եւ մեր ծնողացս մեղաց Թողութեան·

12· Թե ոք այս գրոյս հակառ կա եւ յես ի սրբոյս հանէ, զաւձին, Կաինի, Յուդ

13· աի, խաչահանուացն զանեծս նա առցէ ՅԺԸ հայրապետացն Նզ

14· ոված է· ո՟ք Երրորդութենէն մի գոյի ողորմութ ի ւն յաւուր դատ

15· աստանին: հայր որ ի վանքս Նստի ամեն տարի: Գ: քառասունք կա

16· տարել պարտի մեր ծնողացն եւ յետ մեր վախճանի մեզ· Թե ոչ ընդ Նոյն ան

17· Իծիւքս անգցի եւ առաջի ա՜յ մեր մեղացն պարտական ե:



Տասն և չորրորդ տողում «ողորմութիւն» բառի ընդգծուած վերջաւորութեան մէջ թի միասին, ւ տողի գլխին:

**21.** Կեչառոյքի Ս. Աստուածածնի հարաւային պատի վերայ, երեք լուսամուտների տակ, Գրիգոր Մագիստրոսի մեծ արձանագրութիւնը 1051 կամ 1054 Թուականից, ևԹէ առաջին տողի «հինգհարիւրերրորդի» բառի մէջ ընդգծուած երկրորդ ր սխալմամբ չէ գրուած: (Տես. Շահխ 194: Ալիշան. Այր 260. Լալայեան. Ազգ. Հանդ. XXIII 127: Կոստանեանց. 23): Տախտ. ԺԳ:

1· + Ի հինգ հարիւրերրորդի ամի Թուականութեանս Թորգոմեան ի Թագաւորութեանն ա՟ք եւ ինքնակալ Թագաւորին Կոստ(ա)նդեա Մանումախին բերաւ ոսկի մատանիս, զոր հզաւրին եւ առաքինոյն բա(րե)

2· պաշտին Գրիգորո մագիստրոսին կիտաւնոտին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո Արշակունոյն եւ Հայկազն(ո)յն մեծաւ աշխատուԹ՟ք ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղ(ե)

3· ցիքս իւր եւ ոչ այլ ինչ հայցէ, բայց միայն աղաւԹս առնել ա՟ք եւ ինքնակալ Թագաւորին Կոստանդեայ· ընդ Նմին ծա(ռա)յին ք՟ի Գրիգորոյ եւ որդւոց իւրոց եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիքս Կ

4· եւչառուսայ ցուր (sic) մագիստաւոսն կենդանի է ամեանեյն (sic) շաբաԹ աւր զժամն Հասանա արացեն (sic) (արդեօք ա ա-ի հետ միացած, չի նկատւում) անխափան· եւ յետ ելիցն մագիստաւոսին արացեն (sic) անխափան· արդ որ ոք այսմ վճռի հաստատոս խափանել ջանա Թ |

5· ե առաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ ի քահանաից այնպիսին Յ եւ ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի եւ բաժինն ընդ Յուդայի եղիցի եւ

ընդ տիրապան քաղանաւիցն· եւ այս գիր՝ մեր է
Յովանիսի շնորիւն ԱՆ ԲՉ |

6· Նո էպիսկոպոսիս եւ ս՟ք եւ մեծի հաւրս Բա-
րսղիս· էԹե ոք այս գրոյս խափանել ջանա, այնպի-
սին Նզովս չարաչարս ընկալցի ի ս՟րո լուսաւորչէն
Գրիգորո եւ յամենայն ս՟րոց եւ ի մէնջ· կատա-
րիչք գրոյս աւհնեալ եղ·

Առաջին տողում միացեալ տառերով կամ փակագրով են գրուած «Թոր-գոմեան», «ի Թագաւորուժեանն», «Թագաւորին», երկրորդ տողի մէջ «Գրիգո-րո», «գհուչակաւոր», երրորդ տողի մէջ «Թագաւորին», «Գրիգորոյ եւ որդոց», չորրորդ տողի մէջ «որ ոք», հինգերորդ տողի մէջ «յառաջնորդաց», «շնորիւն», վեցերորդ տողի մէջ «չարաչարս», «լուսաւորչէն Գրիգորո», «կատարիչք գրոյս աւհնեալ» բառերի մէջ ընդգծուածները: Չորրորդ տողի մէջ «որ ոէ», բ-ի գլխիկը սովորականի հակառակ ձեւով է գրուած:

Փակագծի մէջ առնուածները կոտրած են (երրորդ լուսամուտի կողքը), իսկ «հգաւրին», եւ գհուչ., Մագիստրոսին բառերի մէջ ընդգծուածները մա-շուած, բայց հետքերը նկատելի:

**22** Հաւույ Թառի պարսպի արեւելեան պատին ԺԷ. դարում հագցրած խաչքարի արձանագրութիւնը 1081 Թուականից: Արձանագրութիւնը ևնդա-ւոր է, դուրս ընկած. իւր տեսակի մէջ ինձ յայտնիներից ամենահինը: Հրա-տարակւում է առաջին անգամ: Տախտ. ԺՉ:

Յիշէ Ք՟ս զՀասան զորդ
ի Սմբատա զծա
ւա քո եւ ողորմեա նմա ամեն:
Թվ: ՇԼ: էր:

**23.** Ամիր սպասալար Զաքարիայի զօրավար Գրիգորի որդի Դաւթի արձանագրութիւնը 1214 Թուից, Խծկոնից վանքի հիւսիս-արեւելեան պա-տին, Վեստ Սարգսի արձանագրութեան կից, ձախ կողմից: Արձանագրու-Թիւնը շատ խորն է փորագրուած և ներկուած է երեսը, ինչպէս Վեստ Սարգսինը: (Տես Ալիշ. Այր. 112: Կոստանեանց 56.): Տախտ. ԺԱ.

1· Յանուն ա՟ծ ՈԿԳ· Թուականիս
2· Ես Դաւիթ որդի Գրիգորոյ զ
3· աւրավար ամիր սպասալարին Զաք
4· արիաի տեսի զպայծառուԹի ս՟ք
5· ուխտիս Խծկաւնից Ես եւ որդիք իմ
6· հարազատք Գրիգոր եւ Գայլս Շէր



7· պարիք եւ էտու զիմ զսէփհական
8· զգեւղն զՎահանաւանի ըրզկէսն
9· ի ս՟ք Սարգիս յիշատակ ինձ եւ ծն
10· ողաց իմոց· վասն որոյ հայրս Յովհա
11· նէս եւ վարդապետս եւ այլ միաբա
12· նքս հաստատեցին զԴաւԹի եւ զ
13· Յակոբա զՊաւղոսո եւ զՊէտրո
14· սի եւ զս՟ք Շողակաթին զպատարա
15· գն յամենայն ամի, որ լինի յամ
16· ենայն էկեղեցիքս, ինձ առնել ան
17· խափան· էԹէ ոք հակառակի ի հար
18· անց եւ կամ ի պատրոնաց եւ զի
19· մ զյիշատակս խափանէ, որչափ
20· ա՟ծ աւրհնած է, այնչափ այն մարդն
21· անիծեալ է (գաւնէզի վրայ):

Չորրորդ տողի մէջ «զպայծառուԹ՟ի» բառի ու վանկի վերջին տառը միացած է թ-ի հետ: ՈւԹերորդ տողում «ըրզկէսն» բառի մէջ ըր միասին է գրած և գրչի սխալի արդիւնք է. նա կամեցել է «ըզ» գրել, բայց կրկին աւելացրել է զ նախդիրը: Տասն և հինգերորդ տողի մէջ ու յարաբերականը միացած է: Տասնիններորդ տողում «որչափ» բառի մէջ ու վանկը միացած է:

2011
38

**24.** Ծաղկագիր Անիի Թանգարանում, պրոֆ. Մառի պեղումներից. Ս. Գրիգորի բեմի ճակատի ծաղկագիր արձանագրութեան մի բեկոր, ԺԳ. դա-րից: Երկար. 70 սմ. մեր նկարը 15,2 սմ: Տախտ. ԺԳ.

Գրուած է. Թե քաղաքիս Անո ա-ր Սարգ

**25.** Ծաղկագիր Ամաղուի (Վայոց ձորում) Բուրթելաշէն երկյարկանի եկեղեցու արեւելեան պատին. քարի վրայ իւր տեսակի գրչութեան ամենա-գեղեցիկ օրինակներից մէկը: Բուրթէլը Ստեփանոս Օրբէլեանի եղբօր՝ Էլի-կումի որդին էր, որ իշխում էր հայրենի գաւառներին իւր եղբօր Բուղտայի հետ ԺԴ. դարու սկզբին: (Տես. Ալիշան. Սիսական. 202: Թօփճեան. Ցուցակ. ը. 30. Այս գրքի մէջ. Տախտ. ԺԴ. պատկ. 132.): Տախտ. ԺԴ:

Գրուած է. Բուրթէլ իշխանաց իշխան

**26.** Ոմն Սարգսի տափակ գերեզմանաքարի արձանագրութիւնը Կեչա-ռուաց վանքի բակում, 1355 Թուից, որոշ տառերը շեղագրի ձեւերով: Մենք տեսել ենք Մատարայում այսպիսի գրերով աւելի հին արձանագրութիւն ԺԳ. դարու, գարձեալ գերեզմանաքար: Լուսանկարուած է estampage-ից: (Տես. Լալայեան. Ազգ. Հանդէս. սխալներով. 132.): Տախտ. ԺԴ:

Այս է հա|նկիստ Ս|արգսի | որ կիսա|ւրեալ վաղճան|եցաւ ի ձ|եռաց | այլազգ|եաց (երկու վերջին տառերը կտրած) | արեմք (sic) մկրտել | Թվին ՊԴ.

**27.** *Թանգարան Մ. Աթոռոյ. Պղնձի մեծ Խոբ, շրթունքներին խոր ձուլուած արձանագրութիւն: Տառերի մեծութիւնը եզերող գծերով 5 սմ.: Ընդգծուածները «միաբանքս», «տանին» բառերի մէջ միացած: Տանին բառի մէջ աւ գլխիվայր ձուլուած: Հրատարակւում է առաջին անգամ: Տախտ ԺԵ.*

Ի Թ. ՌՁԱ. ես Ջոսիմա քահա մեղապարտ անձամբ ստացա զքոբս յարդեանց իմոց. միաբանքս էտուն ինձ ի տարին: Ա: ժամ Գորգա զաւրավար. տանին.

**28** *Խոտակերաց Ս. Նշանի արծաթեայ, ոսկեզօծ պահարան, Պռոշեանց տոհմի Էաչի իշխանի շինել տուած: Արձանագրութեան տախտակը պարզ արծաթ, գրերը ենդաւոր ձուլուած, 42×26 սմ., 1300 թ.: Ուշադրութեան արժանի է այս արձանգարութիւնը տառերի գեղեցկութեամբ, այլ և յաճախակի և հին գարերի համար տառերի անսովոր միաւորութիւններով (լիգատուրա.): ԺԳ. դարում շատ ընդհանրացած է այս ձևը վանքերի արձանագրութիւնների մէջ:*

*Պահարանի և արձանագրութեան մասին տես. Գեղարուեստ № 4. և առանձին «Խոտակերաց Ս. Նշան». Թիֆլիս. 1912 թ. Համ.* Н. Марръ. Христ. Востокъ I т. вып. II. 123 *Ստեփաննոս վարդ. Մխիթարեան. Ստորագրութիւն Այրի վանաց սրբոյն Գեղարդայ: Վաղարշ. 1873. 80: Շահխ. Ա. 65): Տախտ. ԺԶ.*

1. + Կամաւ կարողին ա՛յ ես Էաչ
2. ի որդի Հասանա որդո Պռոշա
3. որդո մեծին Վասակա յազգէ
4. Հաղբակյանց տիրեցի հայրենի երկր
5. ի սիմո Շապունեաց եւ այլ յոլ
6. ով գաւառաց զաւրաւիգն եւ օգնա
7. կան ունելով զք ս եւ զս՛ բ Նշանս
8. խոտակերաց, որով եւ նախնիքն իմ
9. զօրացան. եւտու կազմել պահարան
10. սրբին անջինջ յիշատակ, որ
11. ք հանդիպիք սմա զիս եւ զծնո (sic)
12. ղսն իմ զԱմիր Հասան եւ զԹ
13. աճերն եւ զհաւրեղբայրն



14. իմ զՊապաք յաղաւթս յիշէ
15. ցէք, այլ եւ զամենայն նախ
16. նիսն մեր եւ զազգատոհմ.

**29.** *Նոյեան տապանի արծաթի պահարանի արձանագրութիւնը, Ս. Էջմիածնում, 51×25½ սմ.: Ընդծուածները միասին: (Տես Շահխ. Ա. 66. Մխիթարեան. Ստոր. Այրի վանաց եր. 8 ) Տախտ. ԺԷ.*

1. Կամաւն այ (առանց պատուի) ես
2. մեղսած (sic) եւ գծուն Դաւ
3. իթ անարժան հաբեղէս ազ
4. գաւ Պռօշեցի տեղապհ (sic) վանիցս
5. ս՛բ Գեղարդայ շինել ետու եւ
6. գոյնըզգ՛յն օրինածօք զարդ
7. արեցի ըզպահարանս Նոյեան
8. տապանիս, փրկայգործ (sic) ս՛բ տա
9. խտակիս որ աժմ կոչի ս՛բ Յակոբ
10. յիշատակ ինծ (sic) եւ իմ ծնողացն եւ
11. ամենայն արունաուու (sic) մերձա
12. ւորաց եւ որ շատ եւ որ սակաւ
13. արթունք (sic) ունիցին այսմն (sic) պահ
14. արանիս տրն (առանց պատուի) Քս հատուսէ (sic) ի մրո
15. ւսանգամ (sic) գալըստեան ամէն
16. որ ոք կամեսցի հանել վանի
17. ցս ս՛բ Գեղարդայ կամ ծախել կամ
18. գրաւին դնել ասկայնոցս (sic) եւ
19. այլց (sic) յանէծս կայենայ եւ
20. Դաւդանայ եւ խաչայհան
21. վացն (sic) առցէ ամէն.
22. շինեցաւ ձեռամբ Քան
23. աքեայցի մեղսայպարտ (sic) ոս
24. կէրիճ Աւէտին Թ. ՌԾԽԷ.

**30.** Գեղարդի պահարանի արձանագրութիւնը 52×24 սմ: Պահարանի երեսը արծաթի թիթեղ է, ոսկեջրած. իսկ յետևի կողմը, ուր արձանագրութիւնն է, մաքուր արծաթ: Պողպ շինած պահարանը ԺԳ. դարում նորոգուած է 1686 թուին, Գեղարդայ վանքի առաջնորդ Դաւիթ վարդապետի ձեռքով, որի արձանագրութիւնը նոյնան տապանի վերայ տեսանք վերև: Արձանագրութիւնը որպէս գրչութիւն ԺԷ. դարու գործ է: Ոսկերիչներն են Գրիգոր և Սարգիս: Պահարանն այժմ գտնւում է Ս. Էջմիածնի մասանց խորանում: Ընդգծուածները միացած: Փակագծի միջինները (10. 28 տող) փչացած: (Տես. Շահխ. Ա. 51: Մխիթարեան. Ստորագր. Այրի վանայ. 77-78: Ալիշան. Այր. 339): Տախտ. ԺԸ.

1· ի թվին ՌՃԼԵ
2· Այս արփիափայլ նը
3· շան աՀաւոր եւ ածային
4· զէն անպարտելի ներկեալ ար
5· եամբ որդւոյն . . . ածամուխ . . (երեք տառ)
6· . . (երկու տառ) ամբ մեծ եւ Հզօր սպանիչս վիշա
7· պին, որ զցօղ անապակն (sic) արեանն է
8· Հեղ ի փրկութ՟ի ՟ի· այս գեղ
9· արդ ա՟ծաշուք եւ Հիազօր արձան լուս
10· (ա)տու կանգնեալ ի փառս Հայաստան ՟ի
Հրափայլ եւ
11· ծաղկանկար արեամբն Ք՟ի վառեալ եւ վա
ելչացեալ պսակ պար
12· ծանաց կաթուղիկէ եկեղեցւոյ եւ թագ ար
քունական
13· ի գլուխ քրիստոնէից· ուստի ի կամս բար
ձրելոյն
14· զօրՀնեալ (sic)· ես Պարոն իշխան որդի Վասակա ար
15· ժանաւորեալ ա՟ծազէն ս՟բ նիզակիս զարդա
րեցի
16· զսա պատուական պաՀարանաւ բարեխօս ինձ ու
17· նելով յաՀաւոր ատենին ք՟ի· եւ մեծաւ յու
սով ըն



18· ծայեցի յիմ՟ գանձագին գերեզմանատունս
19· ի ս՟բ ուխտս Այրիվանից յիշատակ յաւիտե
նական
20· ինձ եւ զաւակաց իմոց Պապաքին Ամիր Հա
սանին
21· եւ Վասակա եւ կենակցի իմոյ Խութլու խա
թունին ի ·ք՟ս
22· փոխեցելոյ եւ Մկդեմին եւ Գոհար խաթունին,
23· որ կիսօրեայ ելին յ՟ոէ· յորոց վերա ամենե
ցու(ն)
24· սոցա կենդանեաց եւ մեռելոց ծագէ շնորՀ ո
25· ղորմութեն Ք՟ի միշտ եւ Հանապազ·

25· եւ փոխանակ այ
26· ամ նիզակի շնորՀեացէ ք՟ս բարեպաշտ իշխա
27· նին Պռոշա խորան արեգակնափայլ եւ անձա
28· ռելի եւ լուսափառ պսակ կազմեալ ի ձեռն Այ:

29· Իսկ ի թվին ՌՃԼԵ–Զ ին ես Դաւիթ վարդապետ
30· առաջնորդ ս՟բ ուխտիս Այրիվանից յազգ
31· էն Խաղբակա եւ Պռոշա որդի Իւանիկին ե
32· տու նորոգել զպաՀարանս Գեղարդա առա
33· ւել պայծառ քան զառաջինն սակս յուսոյն
34· զոր առ Ք՟ս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ
35· Հօրեղբարցն իմոց Դաւիթ եպսին եւ Ստեփան
36· նոս վարդապետին Հանգուցելոց ի Ք՟ս եւ
37· եղբարցն իմոց Բէկս(աւ?) սին, Կիրակոսին եւ
քեռին ի
38· մոյ Մարիամու, յորոց առՀասարակ կենդա
նեաց եւ մեռ

## 93· ե՟լոց ամենեցուն ողորմեսցի եւ զկազմօղի սորի 40· Ն Գրիգորի եւ Սարգսի։

**31.** *Թալինի Մայր եկեղեցու ձախ աւանդատան պատին բարձր, եղել են երկու արձանագրութիւն՝ որմանկարների մասին՝ ծեփի վերայ, առբաղախտաբար մէկը բոլորովին փչացած է, իսկ միւսը կիսով չափ։ Արձանագրութիւնը թուական չունի, բայց հնագրական նշաններից դատելով կարող է Ժ. դարու գործ լինել։ Առաջին անգամն է հրատարակուում այս արձանագրութիւնը։ Տախտ. ԺԵ.*

### Ես Մովսէս նու | աստ եւ անարժա(Ն) | եկեղեցապան | սրբոյ եկեղեց | ւ ոյս *(ընդծուածը մաշուած)* եառւ կեն | դանագրել զս | ուրբ կաթողի *(ընդծուածը ջնջուած)* | կէս ի բարեխաւ ս | ութիւն ինձ եւ | ծն...

**32.** *Մատ. Ս. Էջմ. № 1988|1958, Հակաճառութիւն Տիմոթէոս Էլուրոսի* (Αιλουρος), *հաստ մագաղաթ, 321 թերթ, սկզբից ու վերջից մի քանի թերթ թղթով նորոգած։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր, վերնագրերը փոքր երկաթագրով, մի իջեան, $22\frac{1}{2}\times12\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ և ԺԱՄԱՆԱԿ. Անյայտ, բայց նախքան Ժ. դար (Ը—Թ), հնագրական նշաններից դատելով։*

**Ծանօթ.** *Այս Ձ.-ը* unicum *է, յունարէն բնագիրը կորած է և հայերէն թարգմանութեամբ միակ ձեռագիրն է։ Ուրիշ լեզուով ամբողջական թարգմանութիւն յայտնի չէ։ Հրատարակել են Կարապետ Ծ. վարդապետ և Երուանդ վարդապետ. Էջմ. 1908 թ։*

*Նկարուած է $128^{ա}$. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։ Տախտ. ԺԹ։*

**33. 34.** *Մատ. Երուս. Ս. Յակոբ. №2555. Աւետարան, մեծադիր հաստ և կոշտ մագաղաթ։ Ձեռագիրն անթուական, բայց մէկը հայ գրչութեան Ժ. դարուց առաջ եղած մնացորդներից։ Կարծում ենք Ը—Թ. դարու գործ։ Բուն ձեռագիրը գրուած է խոշոր, բոլորաձեւ երկաթագրով։*

*ա) Բնագրի առաջին տողը 10,2 սմ., մեր նկարը 9,5 սմ.։*

*բ) $12^{ա}$. տողի երկ. 9,1 սմ., մեր նկարը 8, 9 սմ. գրեթէ նոյն մեծութեամբ։ Տես Տախտակ Ի և ԻԱ.*

**35.** *Պատառիկ* (Fragment) *Տ. խաչիկ Ծ. վարդապետի։ Մի թերթ. մեծ. $34\frac{1}{2}\times25\frac{1}{2}$ սմ., մագաղաթ, յիշատակարան, պոկած Ջիւանշիրի գաւառի Մեծ շէն գիւղի աւետարանից։ ԳԻՐ. Բոլորաձև երկաթագիր, թէ բնագիրը և թէ յիշատակարանը։ ԳՐԻՉ. Թուխայել. ՍՏԱՑՈՂ. Աշոտ իշխան. Տեղ. Կոստանդնուպոլիս։ Ժամանակ. 909 թ. փրկչական. ՅԾԸ. թ։ Հայոց։*

*Ամբողջ յիշատակարանն այս է. «... զբաղձանս ներանձնա|ցեալ ունախոհի և մտա|հարուստ ընթերցասիր|ական ուշմաբունի եւ|մեծաքանչ անուն| հայոց սպայապետի | աղնւով վսեմափառ | և հրաշազարդեալ տ՟ծ|ավայելուչ* (sic)



*և ք՟սասէր| ս՟Ն Աշոտոյ իբրեւ | զբրաբիոնն ներըն|ծայեաց զչորից աւե|տարանչացն զարտա|ճառութիւնն ի մի | հաւաքելով առ ի յիշա|տակ ստացաւղին եւ ըն|ծայացելումն ՅԾԸ | թուականութեանն | հայոց. հրամանաւ տ՟ն | Աշոտոյ. գրեցաւ սուրբ|աւետարանս ի Կոստան|դինուպոլիս ի ձեռն|Թուխայելի ծառայի| ծառային ք՟ի տ՟ն Աշոտոյ։—|Բ՟ի Ա՟յն մերոյ փառք յաւիտեան . . » Ընդգծուածը տես պատկերի մէջ. Տախտակ ԺԶ։ Ամբողջը հրատարակուած է Յակոբ Թօփճեանի Ցուցակ Ձեռագրաց Խաչիկ վ-ի Դադեան. Վաղարշապատ 1898. Բ. 28.*

*Բնագիրը $13\frac{1}{2}\times7$ սմ., մեր նկարը $8\frac{1}{2}\times4\frac{1}{2}$ սմ.։ Տախտ. ԺԶ.*

**36.** *Մատ. Ս. Էջմ. Գ. 102|2679. Ժողովածու պատմական—ժամանակագրական, դաւանաբանական—մեկնաբանական կարեւոր նիւթերի։ Թուղթ (Հայոց ձեռագիրների մէջ ամենահինը). $28,2\times19\frac{1}{2}$ սմ. միիջեան, $24\times14$ սմ.։ ԳԻՐ. երկաթագրախառն բոլորգիր։ ԳՐԻՉ. Ղուկաս, որդի Դաւթի քահանայի $152^{ա}$, $86^{բ}$ «Յիշեսջիք ի ք՟ս զիս, զԴաւիթ քահանայ. որոյ գիրս գրեցաւ եւ զորդի իմ զՂուկաս, որ գծագրեաց խսկ զսա»։ ՍՏԱՑՈՂ. Դաւիթ քահանայ՝գրչի հայրը. «զԴաւիթ քահանայ յիշեսջիք ի ք՟ս, ստացող ս՟բ գրոցս» $59^{բ}$.։ ՏԵՂ. Անյայտ։ ԺԱՄԱՆԱԿ. 971 թ. փրկչական։ «Տ՟ր յ՟ս ք՟ս միածին որդի ա՟յ, ողորմեա Գիշին եւ Ագիզ մամին եւ զաւակաց նոցա, տ՟ր Սարգսի, Կարապետին եւ Մելքիսեդեկա եւ մեզաւոր աւագ Երեց Յովհաննիսի որդւոյ Գիշի, որ զկունքս գնեցի, եւ յետ ՄԾԴ ամի զցանկս յաւրինեցի ի ՈՀԴ թուականիս», $163^{ա}$։ Նորոգութեան յիշատակարան ունինք 981 թուից. «Եւ է է նորոգումն սորա ի ՆԼ թուականութեանս Հայոց», $152^{ա}$։*

**Ծանօթ.** *Ձեռագիրը արժանի է առանձին ուշադրութեան ոչ միայն իբրև Ժ. դարու հնագոյն թղթի ձեռագիրը Հայոց մէջ, այլ և իւր գրի ու հարուստ բովանդակութեան համար։*

*Նկարուած է $233^{բ}$., բնագիրն է $9\frac{1}{2}\times13$ 8 սմ., մեր նկարը 9,1×12,2, չնչին տարբերութեամբ փոքր։ Տախտ. ԻԲ.*

**37. 63.** *Մատ. Ս. Էջմ. Գ. № 159|2684։ Մեկնութիւն Երգոց երգոյն Գրիգորի Նիւսացւոյ, հաստ և կոշտ մագաղաթ, $28\frac{1}{2}\times21,2$ սմ. թերթ 246։ ԳԻՐ. Միջին, ուղղակիւն երկաթագիր, երկիջեան $21\frac{1}{2}\times6\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉ. «Ձեռամբ Պետրոսի անարժան գրչի»։ ՍՏԱՑՈՂՔ. Հայր Կիւրակոս և միաբանութիւն. «հրամանաւ հաւր Կիւրակոսի եւ համակամութեամբ եղբարցս»։ ՏԵՂ. «ի գաւառին Տարաւնոյ»։ ԺԱՄԱՆԱԿ. 973 թ. փրկչական. «ՆԻԲ» Հայոց։*

**Ծանօթ.** *Այս Ձեռագիրը արժանի է առանձին ուշադրութեան, իբրև մէկը Ժ. դարու գրչութեան հազուագիւտ մնացորդներից, որ աւետարան չէ։*

*Նկարուած է ա)$245^{ա}$. յիշատակարանը, որ միջին երկաթագրի տարբերակն է, շատ գեղեցիկ և կանոնաւոր։ Բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։ Տախտակ ԻԶ.*

*բ) $245^{բ}$. Շեղագիր, ՈԸ=1159 թուի.՝բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։ Տախտակ ԽԲ.*

**38. 39. 45.** *Ախալցխայի գաւառի Ծղուր գիւղի Աւետարանը. Մագաղաթ. 31×25 սմ. ԳԻՐ. խոշոր երկաթագիր. յիշատակարանը խաչաձևի մէջ, միջին երկաթագիր։ ԳՐԻՉ. «Յովհաննէս ծառայս ք՟ի» Աւետարանի համար,*

*իսկ յիշատակարանի գրիչն է «Եղիա քահանայ եւ կրաւնաւոր»: (Տես յիշատակարանի նկարը)։ ՍՏԱՑՈՂ. Յիշատակարանի գրիչ Եղիա քահանայ: ԺԱՄԱՆԱԿ. 974 Թ. փրկչական. «ՆԻԳ Թուականութեանս Հայոց»:*

**Ծանօթ.** *Յովհաննու աւետարանի մեծագոյն մասն առնուած է մի ուրիշ, ուղղանկիւն, խոշոր երկաթագրով աւետարանից և կցուած սորա հետ: Այս աւետարանի մասին տես մեր յօդուածը, Արարատ 1898 Թ.*

*Նկարուած են. ա) Յիշատակարանը Աւետարանի սկզբում, միջին երկաթագրով. 26×$21^{1}/_{2}$ սմ., մեր նկարը $14^{1}/_{2}$×11,8 սմ. Տախտ. ԻԳ.*

*բ) Բուն աւետարանից $1^{\text{ա}}$. (Թերի սկզբից), 26×9 սմ. իւրաքանչիւր էջը., մեր նկարը $13^{1}/_{2}$×4,7 սմ.: Տախտ. ԻԵ,*

*գ) Յովհաննու աւետարանից, տարբեր գրիչ, $294^{\text{ա}}$. 28×$8^{1}/_{2}$ իւրաքանչիւր էջը. մեր նկարը $14^{1}/_{2}$×4,6 սմ.: Համարում ենք այս մասը Ժ—ԺԱ դարու գիր: Տախտ. ԻԴ.*

**40.** *Ալէքսանդրապօլի Ս. Աստուածածնի եկեղեցու «Ամենափրկիչ» կոչուած աւետարանը. մագաղաթ: ԳԻՐ. մեծ երկաթագիր, երկիւնեան, 28×10 սմ.: ԳՐԻՉՆԵՐ. Յովհաննէս $59^{\text{բ}}$ և Յովսէփ քահանայ գրիչ $222^{\text{բ}}$: ՍՏԱՑՈՂ. Կիրակոս վաճառական. «Ես Կիրակոս վաճառական յաւգնամեղ եւ անարժան ծառայ հանդերձ ընտանեաւք խմովք ցանգացող եղէ սրբոյ աւետարանիս . . .»: ՏԵՂ. «ի գեւղաքաղաքն . . . (չի կարդացւում), որ կոչի Տըտխուեր»: ԺԱՄԱՆԱԿ. 988 Թ. փրկչական. «ի հայոց Թուականութեանն ի ՆԼԷ ամն (sic) գրեցաւ սուրբ աւետարանս». տես նկարը. «ի հայրապետութեանն (Խա) չկայ հայոց կաթողիկոսի»:*

*Բնագիրը, 18×10 սմ, մեր նկարը 15×$7^{1}/_{2}$ սմ: Տախտ. ԼԱ.*

**41. 42. 43. 44.** *Մատ Ս. Էջմ. № 229/2374 (Կար. 222). «Փղոսկրէ Աւետարանը», կազմը փղոսկրի, քանդակներով. $36^{1}/_{2}$×$29^{1}/_{2}$ սմ. մեծութեամբ, նկարազարդ, ընտիր մագաղաթ, 35×$28^{1}/_{2}$ սմ. Թերթ. 232: ԳԻՐ. խոշոր երկաթագիր, երկիւնեան $23^{1}/_{2}$×7 սմ., Աւետարանը: «Առաջք»-ների (խորաններ) Եւսեբիի և Կարպիանոսի Թղթ. միջին երկաթագրով, Աւետարանացոյցը (տօների ընթերցուածների ցանկը) փոքր երկաթագրով: ԳՐԻՉ. Յովհաննէս. ՍՏԱՑՈՂ. «Ստեփաննոս կրաւնաւոր և քահանայ Հայկազնեա», այսինքն Սիւնեաց եպիսկոպոսներից: «Տէ՛ր Ստեփաննոսի է սուրբ աւետարանս, տացէ զսա ո՞ր ի վայելումն մանկանց նոր սիոնի»: Ստացող Ստեփանոսի հօրեղբայրն է Ստեփանոս եպիսկոպոս, Նորավանից հիմնարկողը: ՏԵՂ. Նորավանք (Տես Օրբէլեան. Փարիզ. Ա. 290) ԺԱՄԱՆԱԿ. 989 Թ. փրկչական. «Եւ գրեցաւ յամի Թուոյ հայազանց: ՆԼԸ: եւ ըստ Թուոյ հոռոմի ՋԽԲ. յիմայէզական բոնակալութեանն: ՅՀԹ»:*

**Ծանօթ.** *Այս Ձեռագիրը հին գրչութեան և մանրանկարչական արուեստի նշանաւոր մնացորդներից մէկն է: Տես Էջմ. Աւետարանը. Ստշիգովսկի. Վիեննա. 1892:*

*Հատուածների գլխագրերը մեծ են միւս գրերից, բայց ոչ նկարչական, գլխից կամ պոչից երբեմն արմաւենիկի զարդ կպցրած: Զ տառի բոնօրոշ բոլորակը մի երկու տեղ մարդկային դէմքով: Ոսկի չի գործադրուած*



*բնագրի մէջ ոչ մի տեղ. բացառութիւն է $231^{\text{ա}}$. «Տէ՛ր Ստեփաննոսի է սուրբ աւետարանս» խօսքերը, որ գրուած են խեցոսկով: Բնագրի համար յիշատակարանում կայ այսպիսի նկատողութիւն. «Եւ զսա լիցին հանապազ ընթերցեալ ի սուրբ եկեղեցւոջս (Նորավանից), զի յստոյգ ի հին յաւրինակաց գրեցաւ»:*

*Նկարուած են ա) Աւետարանից հատուած, խոշոր երկաթագրով $90^{\text{ա}}$. բնագիրը 15,3×9 սմ. մեր նկարը $14^{1}/_{2}$×8,6սմ., քիչ փոքր: Տախտ. ԻԹ.*

*բ) Առաջքներից Եւսեբիի և Կարպիանոսի Թղթ. $1^{\text{ա}}$ բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ: Տախտ. ԻԸ.*

*գ) $1^{\text{բ}}$. միջին երկաթագրով.] բնագիրը 10,8×11,3 սմ, մեր նկարը $10^{1}/_{2}$×11 սմ. գրեթէ նոյն մեծութեամբ Տախտ: ԻԷ.*

*դ) Աւետարանացուցի հատուած $232^{\text{բ}}$. փոքր երկաթագրով: Այս նոյն գիրը գործադրում է գրիչը աւետարանների մէջ տողավերջին, եթէ տեղ չի լինում խոշոր երկաթագրով վանկը վերջացնելու. տես* **41** *նկարի մէջ երկրորդ, իններորդ տասնումէկ և տասներեքերորդ տողերի վերջերում: Լաւագոյն ապացոյց, թէ երկուսն էլ նոյն գրչի գործ են: Տախտ. ԺԸ.*

**46. 71.** *Մատ. Ս. Էջմ. Գ. № 364./2877. Աւետարան, քիչ զարդերով, մագաղաթ, 33×26 սմ., Թերթ 218: ԳԻՐ. Ուղղանկիւն, միջակ մեծութեան երկաթագիր, (նման Յոր գիւղի պահպանակի աւետարանի գրին, որ ԺԱ. դարու գործ է. տ. պատկեր և § 48), երկէջ, 27×$7^{1}/_{2}$ սմ.: Թանաքի գոյնը ճգած, դեղնաւուն: ԳՐԻՉ. Գրիգոր գրագիր.: ՍՏԱՑՈՂ. Առաջինն անյայտ, վերջից Թերթ լինելու պատճառով: Երկրորդ ստացողներ «ՈԼԲ»=1183 Թուին «Խոսրովիդուխտ եւ Գոհարն եւ Սուքիաս երեց վանայ». առաջիններն ստացել և նորոգել են տուել երկրորդի համար: ԺԱՄԱՆԱԿ. Անյայտ. Ժ—ԺԱ. դարու գործ ըստ գրչութեան աւետարանների:*

*Նկարուած են ա) $74^{\text{բ}}$. բնագիրը 6,6սմ. առաջին տող. մեր նկարը 6 սմ., քիչ փոքր: Շեղագիր: Խաչի արուեստն ու գոյները նոյն միւս զարդերի հետ: Շեղագիր յիշատակարանի Թանաքը նոյն Ձեռագրի Թանաքի հետ, գունատ, դեղնաւուն: Նոյն գիրը $112^{\text{ա}}$. Ղուկասու սկզբնաւորութեան լուսանցքում «զկնի ո՞ր յերկնցին»: Այս շեղագիրը, որ իւր ձևերով միանգամայն նորի տպաւորութիւն է անում, համարում ենք Աւետարանի գրչի գործ, Ժ—ԺԱ. դարու: Տախտ. ԻԱ.*

*բ) $219^{\text{ա}}$. $5^{1}/_{2}$×14,2 սմ,, երկրորդ տողը, մեր նկարը $2^{1}/_{2}$×7 սմ.: ԺԱՄԱՆԱԿ. փրկչական 1211 Թ, Հայոց Թվ. ՈԿ. տես նկար* **71**, *անվարժ շեղագրով: Տախտ. ԼԳ.*

**47.** *Մատ. Ս. Էջմ. №236|283, (Կ 229) Աւետարան, հաստ մագաղաթ, $21^{1}/_{2}$×$15^{1}/_{2}$ սմ., 361 Թերթ: ԳԻՐ. բոլորաձև երկաթագիր, մի իւնեան, մեծ. $15^{1}/_{2}$×11 սմ.: Գրիչն է Քրիստափոր գրիչ: ՍՏԱՑՈՂ. Սիմեւոն քահանայ. ԺԱՄԱՆԱԿ 1033 Թ. փրկչական, ՆՁԲ. $361^{\text{ա}}$: Յիշատակարանը փոքր երկաթագրով բոլորագրի շատ ձևերով:*

*Նկարուած է $263^{\text{բ}}$., բնագիրը 9×$10^{1}/_{2}$ սմ., մեր նկարը 8,8×10 սմ., գրեթէ նոյն մեծութեամբ: Տախտ. ԼԶ.*

**48.** Պատառիկ (Fragment) Տ. Խաչիկ ծ. վարդապետի. Դիգալի Յոր գիւղի եկեղեցու ճաշոցի մագաղաթեայ պահպանակն է եղել: Ամբողջ երկու թերթ է, Յովհաննու աւետարանի վերջը. ԻԱ. 17. «Եւ ասէ. ա՞ր, դու զամենայն գիտես . . .» ԳԻՐ. Աւետարանի գիրը ուղղանկիւն երկաթագիր, երբեմն բոլորագիծ, ինչպէս յ, գ-ի գլուխը, չափաւոր մեծութեամբ: Այնուհետև փոքրիկ յիշատակարան և Աւետարանացոյց, անցման երկաթագիր՝ բոլորագրով խառն: Յիշատակարանը աւելի ուղղանկիւն, Աւետարանացոյցը թեք (վերջին երեք տողը նկարի մէջ): Աւետարանը երկիջեան է եղել: ԳՐԻՉ. Մխիթար. ՍՏԱՑՈՂ. Ռստակէս քահանայ: ԺԱՄԱՆԱԿ. 1040 թ. փրկչական. «Գրեցաւ ս՞բ աւետարանս ի թուականիս հայոց ՆՋԹ»:

Բնագիրը. $8\times7$ սմ., մեր նկարը $5\frac{1}{2}\times5$ սմ.: Տախտ. ԺԵ.

**49.** Մատ. Ս. էջմ, Գ. № 23|3723. Աւետարան, քառածալ, մագաղաթ, $33,2\times27$ սմ., 242 թերթ: ԳԻՐԸ. Խոշոր երկաթագիր, երկէջ, իւրաքանչիւրը $29\frac{1}{2}\times9$ սմ., յիշատակարանը միջին երկաթագիր: ԳՐԻՉ. «Յուսիկ յետին քահանայ եւ գրիչ». ՍՏԱՑՈՂ. Պետրոս Գետադարձ ? ԺԱՄԱՆԱԿ. 1044|5 թ. փրկչական . «ի կաթողիկոսութեանն տ՞ն Պետրոս (sic) հայոց վերադիտողի, ի թուականութեան հայոց ՆԴԴ»:

Նկարուած է 63բ. յիշատակարանի հետ. բնագիրն է $18\frac{1}{2}\times21$ սմ., մեր նկարը $10\times11\frac{1}{2}$ սմ.: Տախտ. ԼԴ.

**50. 51.** Մատ. Ս. էջմ. №906|988. (Կ. 886). Ճառընտիր Յովհաննու Ոսկեբերանի. հաստ և կոշտ մագաղաթ, $34\frac{1}{2}\times25\frac{1}{2}$ սմ., 285 թերթ: ԳԻՐ. Ճառերը միջին երկաթագրով: Երբեմն հատուածի առաջին տողը, ինչպէս օր. 72բ. 249ա, ինչպէս և յիշատակարաններից ոմանք 63բ. 242ա բոլորաձև, խոշոր երկաթագրով: ԳՐԻՉ և առաջին կազմող. Գեորգ. «Գրեցաւ եւ կազմեցաւ գիրքս այս ձեռամբ իմով Գեորգայ նուաստ գրչի»: Թանաքը խունացած, տեղ տեղ թափած: ՍՏԱՑՈՂ. Տ՞ր Պետրոս Գետադարձ (տես. յիշատակարանի նկարը): ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Անի քաղաք կամ շրջագայ վանքերից մէկը: ԺԱՄԱՆԱԿ. 1045 թ. փրկչական. «Գրեցաւ ա՞ծագիծ պատգամս այս ի թուականիս հայոց. յորում ՆԴԵ էր. ի գլխաւորին հոռոմոց յերեքտասաներորդ ամին ի թագաւորութեան Մոնումախս կայսեր, իսկ մեր լուսաւորութեանս ութն հարիւր եւ քառասուն եւ դ՞ եւ կուսածին ծագմանէն հազար եւ քառասուն եւ ե՞.»

Նկարուած է ա) Բուն ձեռագրի ճառերից 146ա. բնագիրը $16\times10\frac{1}{2}$ սմ., մեր նկարը $7,1\times11$ սմ.,: Տախտ. ԼԶ.

բ) Յիշատակարանից. 284բ. մեծ $7,3\times15\frac{1}{2}$ սմ., մեր նկարը $14\frac{1}{2}\times7$ սմ.: Տախտ. ԽԸ.

**52. 70. 126. 134.** Մատ. Ս. էջմ, Գ. № 363|3793, Աւետարան, նկարազարդ. կաշեկազմ, $39\frac{1}{2}\times30$ սմ ,: Հաստ մագաղաթ, որ պատրաստել է Մովսէս, «որ զմագաղաթն գործեաց», $39\times30$ սմ., թերթ 311: ԳԻՐ. Խոշոր երկաթագիր, յիշատակարանները միջին երկաթագիր, լուսանցքի ծանօթութիւնները փոքր երկաթագիր. երկիջեան, $27\times9$ սմ.: ԳՐԻՉ. Յովհաննէս երէց 88բ. 240ա. 310բ.: ՆԿԱՐԻՉ ? «Դաւիթ Խազրկայ, որ զոսկեզեղն զուգեաց»: ՏԵՂ.



«ի վանս Սանդղկայ»: ԺԱՄԱՆԱԿ. 1053 թ. փրկչական. «գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեան Հայոց ՇԲ ամի»:

**Ծանօթ.** Թերթ 60, 63, 64, 65 կրկնագիր են. հին աւետարանի երկաթագիր հատուածներ, որոնցից երկուսը լուացուած են և երկուսը քերուած, և վերան բոլորգրով յետոյ գրուած: Ընթերցուածների սկզբնագիրը կամ գլխատառը բնագրի երկաթագրից փոքր ինչ մեծ և կողքից դէպի լուսանցքը զարդով կպած, յատուկ հին ձեռագրներին, բայց երբեմն գեղեցիկ մանրանկարչական տառերով:

Նկարուած են՝ ա) բուն Ձեռագրից 130ա. բնագիրը (հաշուած ներքևի ծանօթութիւնները) $9,3\times8\frac{1}{2}$ սմ., մեր նկարը $10\times9$սմ., ուրեմն չնչին զանազանութեամբ մեծ՝ բնագրից: Տախտ. ԼԲ.

բ) Միխայլ ոսկերչի յիշատակարանը (նկ. 70), բոլորգրախառն շեղագիր. տարբեր շեղագրով նոյն ոսկերչի մի այլ յիշատակարանից իմանում ենք, որ «ՈԾ»—1201 թ. շնորհել է նա այս աւետարանը Զաւրավար քահանային. «Որմենի հայրենիքն կոչի»—Ուրմիա ? 310բ: Բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ: Տախտ. ԼԹ.

գ) 89ա Շեղագրով (նկ. 126) Նուիրաբերութեան յիշատակարան 1323 թ. փրկչական. «գրեցաւ ի թվ. հայ. ՉՀԲ յունիսի ԺԱ.» Բնագիրը $21\times16$ սմ., մեր նկարը $11\times8\frac{1}{2}$ սմ.: Տախտ. Զ.

դ) Նօտրգիր (նկ. 134) Նուիրաբերութեան յիշատակարան 1346 թ. փրկչական: Հայոց «ՉԴԵ, ի մայիսի ԻԸ»: Բնագիրը $18\times8$, մեր նկարը $10\frac{1}{2}\times4,7$ սմ.: Տախտ. ԶԱ.

**53.** Մատ. Ս. էջմ. Գ. № 362/3784. Աւետարան, նկարազարդ, մագաղաթ $43\frac{1}{2}\times34$, 287 թերթ: ԳԻՐ. Խոշոր երկաթագիր, երկիջեան, $31\frac{1}{2}\times9,2$սմ.: ԳՐԻՉ. Թովմա երէց, որդի Մովսէս քահանայի: ՏԵՂ. Մելտինէ քաղաք, «ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի»: ԺԱՄԱՆԱԿ. փրկչական 1057 թ. «ի թուականութեանս Հայոց ի հինգ հարիւր ու վեցն, ի կաթողիկոսութեանն տ՞ն Խաչկայ, յորժամ ի Թաւբլուրի վանս էր»:

**Ծանօթ.** 207ա. Լուսանցքում մանրանկարչական զարդի մէջ՝ շեղագրով նկարուած, գրութեան ժամանակից. «զՊաւղոս հայր յիշեցէք ի ք ս և գխ». տես և 262ա.

Նկարուած է 161ա. մեծ երկաթագիր. բնագիրը $14\times22$ սմ., մեր նկարը $9\times14,3$ սմ.: Տախտ. Լ.

**54.** Մատ. Ս. էջմ. 369/311 (Կար. 362): Աւետարան, նկարազարդ: Մագաղաթ, $23\times15\frac{1}{2}$ սմ., 281 թերթ: ԳԻՐ. Բոլորաձև, միջին երկաթագիր, երկէջ, իւրաքանչիւրը $15\times4,7$ սմ.: ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Գրիգոր քահանայ Ակոռեցի, որ 1021 թուին Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի գաղթի հետ հաստատուել էր Սեբաստիայում. 281ա. ՏԵՂ. Սեբաստիա: ԺԱՄԱՆԱԿ. 1066 թ. փրկչ. «ՇԺԵ թուոյս Հայոց»:

**Ծան.** Աւետարանիս նկարագրութիւնն ու մանրանկարչութեան ուսում-

*նասիրութիւնը տես Արարատ 1910. Յունուար, Մարտ. մեր յօդուածը. «Նախնեաց Յիշատակներ» վերնագրով։*

*Նկարուած է $135^{բ}$., բնագիրը և լուսանկարը նոյն մեծութեամբ։ Տախտ. ԻԴ.*

**55**. *Երուս. Մատ. Ս. Յակ. № 2556/1, Աւետարան, կազմը թաւշի վերայ արծաթապատ, ոսկէջրած, 48×36 սմ., Շղթայակրի ժամանակից։ Նկարազարդ։ Հաստ մագաղաթ, երկսիւն, 32×10 սմ.։ ԳՐԻՉՆ ու ՏԵՂՆ անյայտ։ ՍՏԱՑՈՂՔ. Գագիկ Շահնշահ, որդի Աբասայ, Կարսի վերջին թագաւորը և Գորանդուխտ թագուհին՝ իրենց Մարեմ դստեր հետ $5^{բ}$. $135^{բ}$. $222^{բ}$. $371^{բ}$. ԺԱՄԱՆԱԿ. 1028—1064 թ. թ.*

**Ծանօթ**. *Հատուածների գլխագրերը բնագրի երկաթագրից աւելի մեծ են, բայց ոչ մանրանկարչական. կողքից կպուած լուսանցքի զարդի, թռչունի կամ կենդանու պատկերի հետ։ Նկարագրութիւնը. Մեսրոպ եպիսկոպոս, Արարատ. 1910. եր. 332։*

*Լուսանկարուած է $125^{ա}$. բնագիրը չորս անգամ մեծ է մեր նկարից։ Տախտ. ԼԳ.*

**56**. *Մատ. Ս. Էջմ. № 260/275 (Կար. 253). Աւետարան, ազնիւ մագաղաթ, 25,2×19 սմ., 269 թերթ։ ԳԻՐ. Միջին երկաթագիր, շատ սիրուն, երկսիւն, 17×5 սմ.։ Ընթերցանութեան նշաններ ունի կարմրադեղով, բայց ոչ բուն գրչի գործ, որովհետև հին, սև թանաքով կէտադրութեան մօտ, կայ երբեմն և կարմիրը։ ԳՐԻՉ. Յովհաննէս գրիչ։ ՍՏԱՑՈՂ. «Սմբատ Պատրիկ որդի Վահրամայ» կամ «Սմբատ որդի Վահրամայ ք՟սասէր և բարեյաղթող Պատրիկ», որ աւետարանիս գրչութեան տարին առել է «զձեւ և զկարգ կրաւնաւորութեան» և «անուանեցաւ Յովհաննէս ըստ վերակոչման հրամաբելոյ իմոյ ի ծփանաց կենցաղոյս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1071—1078 թ. փրկչական. Թուականի միաւորը չի կարդացւում. «Ի հինգ հարիւրորդի քսան . . . դի ամի Թուաբերութեան հայոց (ընդգծուածը հազիւ տեսանելի) ի թագաւորութեանն Յունաց Միխայլին որդւոյ Տուկիծին (1071—1078) . . . . (մի կամ երկու բառ) ի կուրապաղատութեանս Մարեմայ բարեպաշտի եւ հզաւրի . . . (մի բառ) եւ տ՟ն որդւոյ. յամս ա՟ծապատիւ և հոգևոր տ՟ն Գրիգորիսի եւ տ՟ն Գէորգայ»։*

*Նկարուած է յիշատակարանի մի հատուածը. բնագիրը $11\times11^{1}/_{2}$ սմ., մեր նկարը $10^{1}/_{2}\times11,2$ սմ.. Տախտ. ԽԲ.*

**57**. *Մատ. Ս. Էջմ. № 257/288 (Կ. 250). Աւետարան, մագաղաթ, $22\times16^{1}/_{2}$ սմ.։ ԳԻՐ. Միջին երկաթագիր, երկսիւն, իւրաքանչիւրը 17×5,3, սմ. ներքևի ծանօթութեան հետ։ ԳՐԻՉ. Ահարոն գրիչ։ ՏԵՂ. «Աւարտեցաւ ս՟բ աւետարանս ի մայրաքաղաքս Աղեկսանդրու ընդ հովանեաւ Յովհաննու աւետարանչին»։ ԺԱՄԱՆԱԿ. 1099 թ. փրկչական. «Ի թուականութեանն հայոց ՇԽԸ գրեցաւ ս՟բ (աւ)ետարանս»։*

*Լուսանկարուած է $171^{ա}$. բնագիրը և լուսանկարը նոյն մեծութեամբ։ Տախտ. ԽԵ.*

**Ծանօթ**. *Ուշադրութեան արժանի են կարմրադեղով, շեղագրին մօտեցող, անցման բոլորգրով յիշատակարանները $75^{բ}$. Մատթէոսի վերջում, և $280^{բ}$. Յովհաննու վերջում՝ գրչի անունով։ Նոյն գրով են և աւետարան-*



*ների վերնագիրները։ Կայ մի յիշատակարան $125^{բ}$. ՈԽԲ (=1193 թ.) թուականով, խակական շեղագիր։ Մարկոսի ամբողջ աւետարանը սրբագրուած է բոլորագիր—շեղագրով կամ առոգանութեան նշաններ դրուած, բայց ոչ բուն գրչի ձեռքով, հաւանօրէն ԺԲ—ԺԳ. դարում (առաւօտ բառն այսպէս գրուած)։*

**58**. *Մատ. Ս. Էջմ. Գ. № 124/2600. Ճառընտիր, Առ որս Աստուածաբանի, հաստ, մագաղաթանման, կոկած և օսլայած թուղթ, $26\times18^{1}/_{2}$ սմ., 265 թերթ։ ԳԻՐ. Աքանչելի, միջին երկաթագրով. վերնագիրները կարմրադեղով և փոքր երկաթագրով, նոյնպէս շատ գեղեցիկ. 16,8×10,8 սմ.։ ԳՐԻՉՆ ու ԺԱՄԱՆԱԿՆ անյայտ։ ՍՏԱՑՈՂ «Գրիգորէս Հայոց կաթողիկոս» 26. կամ «Հոգևոր տ՟ր Գրիգորէս» $79^{ա}$. տես և $83^{ա}$ $116^{ա}$. $158^{բ}$. $181^{բ}$. $211^{բ}$ և $240^{բ}$. ընդգծուած յիշատակարանները խոշոր երկաթագրով։ Ո՞ր Գրիգորիսն է, դժուար է ճշտութեամբ որոշել. կարծում եմ Գրիգոր Վկայասէր կամ Գրիգոր Գ., ուրեմն ԺԱ—ԺԲ. դարու գիր։*

*Նկարուած է $179^{բ}$. բնագիրը $14,2\times10^{1}/_{2}$ սմ., առաջին տողը. մեր նկարը 13,7×10, քիչ փոքր բնագրից։ Տախտ. ԽԱ.*

**59**. *Մատ. Ս. Էջմ. № 898/985(Կ. 879)։ Ճաշոց՝ նկարազարդ, մագաղաթ, $31^{1}/_{2}\times22^{1}/_{2}$ սմ., 281 թերթ։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր, խորանները փոքր երկաթագիր. գեղեցիկ գրչութեամբ։ ԳՐԻՉ, ԺԱՄԱՆԱԿ, ՏԵՂ Անյայտ. համարում եմ ԺԱ—ԺԲ. դարու գործ։*

*Նկարուած է $155^{ա}$. բնագիրը 8,9×15,1. մեր նկարը $9,2\times15^{1}/_{2}$ սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։ Տախտ. ԽԳ.*

**60**. *Մատ. Ս. Էջմ. № 1239/1214 (Կար. 1209)։ Մեկնութիւն մարգարէութեան Եսայեայ՝ Յովհաննու որդւոյ Մուշին. հաստ, մագաղաթանման թուղթ, $24^{1}/_{2}\times17^{1}/_{2}$ սմ.։ ԳԻՐ. Անցման բոլորգիր, երկաթագրի և շեղագրի խառնուրդով, մի իջեան, $20\times15^{1}/_{2}$ սմ ։ ԳՐԻՉ և հեղինակ. Յոհաննէս . . . կրաւնաւոր որդի Մուշին և աշակերտ ս՟բ վարդապետին Թադէոսի»։ ՏԵՂ. «ի գեղս, որ կոչի Մարմէտ (Վասպուրականի), ընդ հովանեաւ ս՟բ գերեզմանի վարդապետին Թադէոսի» (հեղինակի ուսուցիչը)։ ԺԱՄԱՆԱԿ. 1118 թ. փրկչական. «եւ գրեցաւ ի ՇԿԷ թուականիս հայոց . . . ի հայրապետութեանն տ՟ն Դաւթի հաոց կաթողիկոսի ի Վասպ.»*

**Ծանօթ**. *Այս Ձ-ը արժանի է ուշադրութեան իւր խառն գրչութեամբ, և իբրև հեղինակի ձեռքով գրուած սկզբնական օրինակ (*original*)* unicum, *որից արտագրութիւն յայտնի չէ մինչև այժմ։ Հեղինակը յաճախ նոր բաներ է աւելացրել և այդպիսի դէպքերում շեղագրին աւելի մօտ ձևերով։ Ինքն էլ ներողութիւն է խնդրում «վասն ադեղութեան գրոյս»։ Մի յետին ձեռք աւելացրել է կէտադրութիւնը և լրացրել պակաս թողած տառեր. մի երկրորդ, աւելի յետին ձեռք կարմիր թանաքով տնատել, նշաններ դրել։ Ընտրել ենք այնպիսի երես, ուր յետին ձեռքը շատ քիչ նորութիւն է մտցրել. եղածները հետևեալներն են. ա) չորրորդ տող. «եւ եթէ», եւ-ի վերայ բոլորակ նշան՝ կարմիր թանաքով. բ) երրորդ տող «յայտ առնէ», Ե-ի գլխիկը սև թանաքով կեռացրել է. «զոր աւրինակ այր տէր» բառերի վերայ մի մի բութ աւելացրել. գ) ինն-*

բորդ տող «ցանգայ», յ-ն յետոյ է աւելացրել. գ) տասներորդ տող «քննող», ռ-ի ներքին մասը միացրել է, որպէս զի օ դառնայ, որով և արտագրողի ժամանակը ԺԲ-ի վերջ, ԺԳ. դար կարող ենք համարել:

Այս Զ-ի մասին տես. Արարատ. 1913 թ. Յունուար. Կ. Եպ.-ի յօդուածը:

Նկարուած է 93 եր., բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ: Տախտ. Ծ.

**61.** Մատ. Ս. Էջմիածնի, № 905/832 (Կար. չկայ). Ճաշոց, լուսանցքի զարդերով, մագաղաթ. $21\frac{1}{2}\times16\frac{1}{2}$ սմ., թերթ 250: ԳԻՐ. Միջին, սքանչելի երկաթագիր, խորաները փոքր երկաթագիր, մի իչեան, $14\frac{1}{2}\times10,2$ սմ. ԳՐԻՉ. Գէորգ Սկեռացի (ոչ Լամբրոնացի) բանաստեղծական ճանապարհով գտնուած. Սկեռայի գրչութեան դպրոցի հնագոյն ներկայացուցիչներից մէկը. «ընդ որս եւ ես ժտիմ պաղատանաւք յընթերցողացդ յիշել զաշխատող սորա զԳեորգ, որ մեծաւ ջանիւ գրեցի զսա յընտիր եւ յաղնիւ յաւրինակէ»: ՍՏԱՑՈՂ. Ստեփաննոս քահանայ: ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Սկեռան: ԺԱՄԱՆԱԿ 1154 թ. փրկչական. «Ո՛ երրորդի երրորի թ(ուա)ականիս հայւոց գրեցաւ ՛ ծայլին բուրաստանաց ծաղկազումար մատեանս»:

Նկարուած է 66բ. ամբողջ երեսը. $14\times10$ սմ., մեր նկարը $11,3\times7,8$սմ. Տախտ. ԾԱ.

**62.** Մատ. Ս. Էջմ. № 1687/1890 (Կար. 1645). Եղիշէ պատմագիր, թուղթ, թերթ 250: ԳԻՐ., Անցման երկաթագիր՝ բոլորգրի ձեւերով խառն, մի իչեան, $17\frac{1}{2}\times10\frac{1}{2}$ սմ.: ԳՐԻՉ. Դաւիթ: ՍՏԱՑՈՂՔ. Գրիչը և հարազատ եղբայրը Մխիթար: ՏԵՂ. «ի վանս Կոշա, ընդ հովանեաւ սրբոյ Ստեփաննոսի»: ԺԱՄԱՆԱԿ. փրկչական ՌՃՀԴ=1174 թ. «ի հայկազեան թուականիս վեցհարիւրերորդի եւ երկուց տասանց եզակաւ միով աւաւելեալ. Եւ ըստ նորում շրջանիս միոյ յոբեւլենի եւ երից տասանց եւ քառից երկուց» յիշատակարան 208ա—208բ.

Նկարուած է 208ա. բնագիրը $17\frac{1}{2}\times10\frac{1}{2}$սմ., մեր նկարը $14\frac{1}{2}\times8\frac{1}{2}$ սմ.: Տախտ. ԼԷ.

**64.** Մատ. Ս. Էջմ. № 1561/1568 (Կ. 1523) Նարեկ. նկարազարդ, ազնիւ մագաղաթ, $15,2\times11\frac{1}{2}$, 336 թերթ: ԳԻՐ. Փոքր երկաթագիր, սքանչելի, մի իչեան, $10,2\times7\frac{1}{2}$ սմ.: ԳՐԻՉ. «Զաղորմելի գրիչս Գրիգոր, աղաչեմ յիշել ի տ՞ր. 28ա.: ՍՏԱՑՈՂ. Ներսէս Լամբրոնացի. «Ստացաւղ սորա զՆերսէս, զորդի մեծազաւր սեւաստոսի Աւշին յիշես. ի ք՞ս 55բ. տես և 115բ. 174բ.: ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Սկեռայի վանքը: ԺԱՄԱՆԱԿ. 1173 թ. փրկչական. «Թու. ՈԻԲ»:

**Ծանօթ.** Առաջին երեսն ամբողջապէս ոսկեգիր է. ազնիւ ոսկով են գրուած նաև գլուխների սկզբնաւորութեան և պարբերութիւնների առաջին տողերը: Գլուխների վերնագիրները կարմիր և բնագրից աւելի փոքր տեսակի երկաթագրով:

Նկարուած է 10ա. ամբողջ երեսը. $10,2\times7\frac{1}{2}$սմ., մեր նկարը քիչ փոքրը $9,7\times7,2$ սմ: Տախտ. ԼԹ.

**65.** Մատ. Ս. Էջմ. Գ. № 482/3795 Տօնապատճառ. Կաշեկազմ. $40\times26\frac{1}{2}$ սմ., Թուղթ. $40\times26\frac{1}{2}$ սմ: ԳԻՐ. Արեւելեան, խոշոր բոլորգիր (անցման, միջին



երկաթագրից բոլորգրին). երկիչեան, $31\frac{1}{2}\times9$ սմ: ԳՐԻՉ. Փիլիպպոս քահանայ. Կազմող. Ակոբ: Գրչութեան ժամանակից է կազմը, 1191 թուից: «Ի :ՈԽ: թվ. հայոց կազմեցաւ տաւնապատճառս այս արդեամբ Յաւղկայ աղախնոյն ք՞ի . . .» 208բ.: Կազմի առաջին երեսին շեղագրին մօտ բոլորգրով դրոշմուած է. «Փիլիպպոսի է. զԱկոբ յիշեայ ի ք՞ս»: ՍՏԱՑՈՂՔ. Գրիչը և իւր կինը, Մարեմ տիկին (մայր մանկանց իմոց Մարեմ տիկին), որ ապա ՈԽ=1191 թուին նուիրում են «Ա՞ծընկալ ս՞բ Նշան»ին (Գեղարդում): ՏԵՂ «ի ս՞բ ժողովարանիս Այրիվանից. ընդ հովանեաւ սրբոյ Ա՞ծածնի և ս՞բ վկայից»: ԺԱՄԱՆԱԿ. 1190 թ. փրկչական. «ՈԼԹ». (տես պատկերը), լուսանցքում:

Նկարուած է 156բ. բնագիրը $8\frac{1}{2}\times9\frac{1}{2}$ սմ., մեր նկարը $8\times9$ սմ. առաջին տողը լուսանցքի թուականի հետ: Տախտ. ԿԲ.

**66.** Մատ. Ս. Էջմ. № 921/948 (Կար. 901), Ճառընտիր Եփրեմի. հաստ մագաղաթանման թուղթ, $26\times16\frac{1}{2}$ սմ. 298 թերթ,: ԳԻՐ. Արեւելեան բոլորգիր, անցման (փոքր երկաթագրից), մի իչեան $19,2\times11,2$ սմ.: ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Յոհաննէս 66ա. 141, 145ա. 170բ. «զՅովհաննէս գրողս եւ զհայր իմ Սարգիս բժիշկն յիշեսջիք և ա՞ծ զձեզ յիշէ»: ԺԱՄԱՆԱԿ. 1196 թ. փրկչական. «ի թւիս (sic): ՈԽԵ» 170բ և 231ա: Երկու տեղն էլ թուականի գրութիւնը տարբեր է բնագրից, բայց նոյն ժամանակի և գրչի գործ եմ համարում:

Նկարուած է 165ա. Երանելոյն Եփրեմի վասն սատանաի, թէ որպէս խաբէ զորդի մարդկան եւ գայթակղեցուցանէ» վերնագրով հատուածից: Բնագիրը $13,2\times11$ առաջին տողը, մեր նկարը $13\times10,9$, համարեա նոյն մեծութեամբ: Տախտ. ԼԸ.

**67.** Մատ. Ս. Էջմ. Գ. № 163/2606. Մխիթարայ Գոշի Մեկնութիւն մարգարէութեան Երեմիայի: Հաստ թուղթ, մագաղաթանման . թերթ 234: ԳԻՐ. Բոլորգիր արեւելեան, մի իչեան. $18,6\times12$ սմ. ԳՐԻՉ. Ձեռագրինն անյայտ, բայց յիշատակարանի գրիչը և ՍՏԱՑՈՂ Դաւիթ (Քոբայրեցի ?): Յիշատակարանի հեղինակը՝ անուանում է իրեն «սիրող և համակամ և յորդորիչ նորին (Մխիթարայ Գոշի) Դաւիթ». ընդօրինակել է տուել Գոշի օրինակից և սիրոյ ու շնորհակալութեան խօսքեր ունի ուղղած նորան: «Զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել և դրոշմել զսա, այլ և այլում տեմարաց եսու գծել (յիրաւի, խառը գրչութիւն) և ապաշաւ ունիմ. թեպէտ և ուղղեցի յետոյ»: ԺԱՄԱՆԱԿ. Փրկչական 1198 թուին. « և արդ իմուտս գրութեան զայս տաւ ԲԺ ան ամ էր աամանն Ե՞մի . . . և ԽԷ է առ Ո ով թուականս Հայոց»:

Նկարուած է 194ա. բնագիրը $12,2\times11,7$ սմ., մեր նկարը $8,6\times8$սմ.: Տախտ. ԽԴ.

**68.** Պատառիկ Տ. Խաչիկ ծ. վարդապետի: Շարական փոքր երկաթագրով. ոչ ուշ քան ԺԲ դարը: Նման գրով մի ամբողջ ձեռագիր գտնւում է Երուս. Հայոց Ս. Յակոբեանց մատենադարանում:

Բնագիրը $5\times5$ սմ., մեր նկարը $4\times4$ սմ.: Տախտ. ԼԲ.

**69.** Մատ. Ս. Էջմ. Գ. № 25/2589, Աւետարան. նկարազարդ, մագաղաթ, $23\frac{1}{2}\times18$ սմ. լուսանցքները կազմելիս կտրած. թերթ 339: ԳԻՐ. Միջին եր-

կաթագիր հաստ գծերով, բայց սիրուն և կանոնաւոր. փայլուն Թանաքով, լուսանցքի մանրանկարները և մանրանկարչական գլխատառերը ճոխ և գեղեցիկ։ ԳՐԻՉ. Սարգիս սարկաւագ։ ԾԱՂԿՈՂԸ Հայրապետ քահանայ։ ՍՏԱՑՈՂ. Կոստանդին քահանայ. ՏԵՂՆ անյայտ, բայց գրին և նկարչութեան նայելով Սեբաստիա կամ Կիլիկիային մօտ գտնուած երկրներում։ Պետք է ի նկատի ունենալ նաև բիւզանդական կայսեր անուամբ Թուագրութիւնը։ ԺԱՄԱՆԱԿ. 1200 Թ. փրկչական. «ի Թուականութե՟ն հայոց ՈԽԹ, ի Թագաւորութեանն յունաց Անկեղոսի, ի գլխապետութե՟ն հայոց Տ՟ր Գրիգորի Ապիրատ անուն կոչեցեալ. յերեքտասան ամի առման Է՟ մի. եւ յերրորդումն ամի Թագաւորութեանն Հայոց Լեւոնի բարեպաշտի ի բռնակալութե՟ն այլասեռիցս Ուգնատնին»։

Նկարուած է $304^{\text{բ}}$., բնագիրը 13,6×5,8 սմ., մեր նկարը 14,6×6 սմ., քիչ մեծ բնագրից։ Տախտ. ԽԶ.

**72. 73.** *Մատ. Ս. Էջմ.* № 364/987 (Կար. 357). Աւետարան, նկարազարդ, մագաղաթ, 33×26 սմ. Թերթ 313։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր. աւետարանը և յիշատակարանը Թէև գրուած են միջին երկաթագրով, բայց յիշատակարանի գիրն աւելի Թեք է դէպի ձախ և համեմատաբար աւելի փոքր։ Երկէջ, 25×7 սմ.։ ԳՐԻՉ «Հայրապետ նուաստ քահանա»։ ՍՏԱՑՈՂՆԵՐ. Հայր Յովհաննէս և Բարսեղ վանուց վանական. սրանց մահուանից յետոյ նրանց Ներսէս քոյրորդին։ Նիւթի գրամը տուել են Յեւանէս, պարոն Ուքան եւ Պապքան։ ՏԵՂ. Սեբաստիա. «Ընդ հովանեաւ ս՟բ Ա՟ծածնին եւ ս՟բ Սարգսի զաւրավարին, որ յանուն նոցա կանգնեցաւ ս՟բ եկեղեցիքս ի քաղաքիս Սեբաստիա»։ ԺԱՄԱՆԱԿ. 1211 Թ. փրկչական. «Յամի վեցհարիւրորդ վաԹսներորդի Թուականիս». տես նկարը։ «Արդ ի հայրապետութեանն ոչ գիտեմ ասել, եԹէ զում գրեցից անուն, այլ ասեմ, Թէ երից հակառակաց. Տ՟ր Յովհաննիսի, Տ՟ր Անանէի եւ Տ՟ր ԴաւԹի։ Իսկ ի մերում գլխապետութեանս Տ՟ր Գրիգորի ս՟բ և ընտրեալ եպիսկոպոսի»։

Նկարուած է ա) բուն ձեռագրից $311^{\text{բ}}$. բնագիրը. 13,4×6,9 սմ. մեր նկարը 9,4×4,7 սմ.։ Տախտ. ԼԴ.

բ) Յիշատակարանից $311^{\text{բ}}$. բնագիրը 17,3×$7\frac{1}{2}$ սմ., մեր նկարը 12×5 սմ.։ Տախտ. ԺԶ.

**74 75.** *Մատ. Ս. Էջմ.* № 232/378 (Կար. 225), Վախտանգի նկարազարդ Աւետարանը. կաշեկազմ $33\frac{1}{2}$×25 սմ., հաստ մագաղաթ, 34×24 սմ., 308 Թերթ։. ԳԻՐ. Աւետարանը երկաթագրով, ոչ շատ խոշոր. յիշատակարանը միջին երկաթագրով, խորանների մէջ Եւսեբիի և Կարպիանոսի Թղթ. փոքր երկաթագրով։ ԳՐԻՉ և ՆԿԱՐԻՉ. Թորոս $2^{\text{ա}}$, $9^{\text{բ}}$. $258^{\text{բ}}$. (տես. նկարը. Տախտակ Խ.)։ՍՏԱՑՈՂՆԵՐ. «Վախտանգ որդի Հասանա որդւոյ Վախտանգայ»և նորա ամուսինը Խորիշահ «դուստր մեծ սպարապետին Սարգսի $308^{\text{ա}}$.։ ԺԱՄԱՆԱԿ. Առաջին քառորդ ԺԳ. դարու, բայց հաւանօրէն ՈԿԱ.=1212 Թուին, երբ Խորիշահ վերաշինեց Մեծարանց վանքերը (տես. Բարխուդարեանց. Արցախ 171)։ Մի եկեղեցու շինութեան մասին յիշատակուած է և Աւետարանիս յիշատակարանում (Յիշատ. ամբողջ տես I. А. Орбели. Гасанъ Джалалъ, Князь Хаченскій. Сп. 1909 եր. 408- Извѣстія имп. Академіи Наукъ).

**Ծանօթ.** Հատուածների սկզբնագիրը մանրանկարչական և առաջին տո-



ղը խնցոսկով գրուած։ Ոսկեգիր է նոյնպէս Ջօնը կապոյտ մակերևուԹի վերայ, $9^{\text{բ}}$։ Մանրանկարներն ու լուսանցքի զարդերը արժանի ուշադրութեան։

Նկարուած է ա) յիշատակարանից $308^{\text{ա}}$. միջին երկաթագիր., բնագիրը 9×15 սմ., մեր նկարը 7,9×13 սմ.։ Տախտ. ԽԹ.

բ) Խորանների մէջ Եւսեբիի Թղթ. $2^{\text{ա}}$. փոքր երկաթագրով. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ, 10×11,8 սմ.։ Տախտ. Խ.

**76** *Մատ. Ս. Էջմ.* № 919/947 (Կար. 899), Ճառք Սեբերիանոսի, թուղթ, $27\frac{1}{2}$×21,7 սմ., երկիջեան, իւրաքանչիւրը 25,2×$7\frac{1}{2}$ սմ.։ ԳԻՐ. Անցման բոլորգիր բնագիրը, իսկ մեր լուսանկարը շեղագիր յիշատակարանից։ ԳՐԻՉԸ. Պետրոս գրիչ, որի եղբայրն է Սիմեոն։ ՍՏԱՑՈՂ. Հայր Ականց անապատի Թորոս և միաբանութիւն. «հրամանաւ երից երանեալ հաւրն Թորոսոյ և այլ միակամ և միախորհուրդ եղբայրութե՟ս»։ ՏԵՂ. «ի գերահռչակ անապատս, որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ ս՟բ Ա՟ծածնիս և ս՟բ Առաքելոցս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1215 Թ. փրկչ. (տես լուսանկարը, Տախտակ ԽԷ). «ի Թագաւորութե՟ն հայոց Լեւոնի յաղԹողի եւ բարեպաշտի եւ ի հայրապետութե՟ն Յովհաննիսի հայոց կաԹողիկոսի»։

Նկարուած է յիշատակարանը, շեղագիր, բնագիրը 13,6×8,8 վերջին տողը, մեր լուսանկարը 14×8,3. Տախտ. ԽԷ.

**77. 78. 125.** *Մատ. Ս. Էջմ.* № 230/1519 (Կ. 223), Բագնայրի աւետարանը. 299 Թերթ, ընտիր մագաղաթ, 41,8×29,2 սմ.։ ԳԻՐԸ. Խոշոր երկաթագիր, երկիջեան, 29×7,8 սմ., առանց ներքևի ծանօթութիւնների։ ԳՐԻՉ. Իգնատիոս գրիչ. ՍՏԱՑՈՂ. Իշխանաց իշխան պատրոն Խաւռաս և իւր կինը ԽաԹուն. «Զպատրոն Խաւռաս որդի Ամիր Սարգսի եւ զամուսին իւր զԽաԹունն յիշեսջիք յաղաւԹս, որ ստացան զաւետարանս Բագնայրի Ա՟ծածնիս վասն յիշատակի իւրեանց սիրելի եւ անդրանիկ Սասնային, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի ք՟ս եւ սուգ մեծ եԹող ծնաւղաց իւրոց, որք կարդայք յիշեսջիք ի ս՟բ յաղաւԹս ձեր, աղաչեմք». $99^{\text{բ}}$.։ ԺԱՄԱՆԱԿ. Ուրիշ տեղ ցոյց էինք տուել, Թէ գրուած պիտի լինի 1212—1223/9 տարիների մէջ (Անահիտ 1911։ Մայիս—Յունիս եր. 102), բայց պատահմամբ վերջերս գտանք սորա յիշատակարանի մի պատառիկը, որպէս պահպանակ №1259|1134 ձ-ի, որից պարզուեց, Թէ գրուած է «ՈՁԱ, (=1232) Թուին։ ՏԵՂ. «ի մեծահռչակ ուխտս ի Հառովմոսի կոչեցեալ վանք»։

Նկարուած է ա) $2^{\text{ա}}$. աւետարանից, մեծ երկաթագիր, բնագիրը 13×7,8 սմ., մեր նկարը 12,8×7,7, գրեԹէ նոյն մեծութեամբ։ Տախտ. ԾԲ.

բ) Յիշատակարան բուն գրչի, միջին երկաթագիր $297^{\text{բ}}$. բնագիրը 11×$15\frac{1}{2}$, մեր նկարը 10,9×15,3, գրեԹէ նոյն մեծութեամբ։ Տախտ. ԼԵ.

գ) Յիշատակարան յետին, բոլորգիր $297^{\text{ա}}$., բնագիրը $28\frac{1}{2}$×$17\frac{1}{2}$ սմ., մեր նկարը 9×$15\frac{1}{2}$ սմ.։ Սորա ժամանակը 1308 Թ. փրկչական։ Տախտ. ՀԷ.

**79.** *Մատ. Ս. Էջմ.* № 2093/2101 (Կ. 2050). Բանք յԱռ որս Աստուածաբանի կամ Գիրք Առասպելաց. թուղթ, $17\frac{1}{2}$×$12\frac{1}{2}$ սմ.։ ԳԻՐ. Արևելեան բոլորգիր, մի իջեան, 13,8×$8\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉ. Ստեփանոս ԱղԹամարցի. ծնողն է Յոհաննէս, «տ՟ր Սարգիս հաւրեղբայր»։ ՏԵՂ. «ի վանքս Խորանաշատ կոչեցեալ, ի նահանգիս Ագուանից, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ Ա ծածնիս».

204ա.: «Ի գաւառիս Գարդմանայ առ ոտս ուղփաձեմ և ա՟ծարդիւնական վարդապետիս Վանականի, որ փայլէ ի ժամանակիս որպէս զաստղ առաւօտու» 85բ: ԺԱՄԱՆԱԿ. 1223 Թ. փրկչական. «ի ՈՀԲ Թուաբերութե՟ս մերային ազանց»:

Նկարուած է 102ա. բնագիրը 8,3×9,3 սմ., մեր նկարը 8×9 սմ: Տախտակ. ԽԴ.

**80.** Ձեռագիրը սեպհականութիւն է Տրդատ եպիսկոպոս Պալեանի. Աբիստոտէլի Ստորոգութիւնք և Նիւսացու Յաղագս կազմութեան. թուղթ. ԳԻՐ. բոլորգիր: ԳՐԻՉ. Ստեփանոս գրիչ. ԺԱՄԱՆԱԿ. 1239 Թ. փրկչական. «գրեցաւ ի Թւ. ՈՁԸ»:

Երկրորդ մասը (Նիւսացի) գրուած է նոյն գրչի ձեռքով 1244 Թուին, Սմբատ արքայեղբայր Գունդստապլի խնդիրքով, Ատանայում: «Գրեցաւ գիրս կազմութե՟ հանճարայեղձ բանի, Գրիգորի ա՟ծիմաստ անձին, ձեռամբ Ստեփանոսի նուաստի անարուեստ գրչի և մեղապարտ անձին, ի խնդրոյ մեծ սպարապետին Հայոց Սմբատա, որդւոյ Կոստանդեա մեծ աթոռապահին հայոց և եղբաւր Թագաւորին հայոց Հեթմոյ, որ և ստացաւ զսա ի յազատ արդեանց իւրոց ի վայելումն իւր և իւրոցն և ի յիշատակ հոգւոյ իւրոյ յետ աստեացս. գրեցաւ սա ի Թուականութե՟ս: ՈՂԳ: Ի Թագաւորութեանս Հայոց Հեթմու (sic!) և յիշխանութե՟ն իշխանաց իշխանին, հօգելից ծերոյն Կոստանդեա և ի հայրապետութեանն տ՟ն Կոստանդեա: Արդ գրեցաւ ի քաղաքս, որ կոչի Ատանա, ընդ հովանեաւ ս՟բ և յառաջ զաւրավարին Թեոդոսի» 347բ:

Այս շրջանից է Սմբատ Գունդստապլի ձեռքով գրուած յիշատակարանները, որոնցից մէկն է 91ա, մեր նկարը: Տախտ. ԾԵ.

**81.** Ազգային Մատ. Կ. Պօլսոյ Հայոց, № 68. Աւետարան, նկարազարդ, ազնիւ մագաղաթ, 24×16 սմ. ԳԻՐ. Երկաթագիր միջին, երկէջ, 17×5 սմ., յիշատակարանը արևելեան բոլորգիր (արևմուտքի համար հազուագիւտ): Կոստանդին կաթուղիկոսի ձեռքը սովորական բոլորգրով: ԳՐԻՉ. Յովհաննէս? (անունը գրուած է տողի գլխին և տարբեր Թանաքով, որով և տարակուսելի. կարծում ենք, Թորոս Ռոսլինի դպրոցի գործ է): ՍՏԱՑՈՂ. Կոստանդին Ա. կաթուղիկոս Բարձրբերդցի, որ «ի ստացումն ս՟բ կտակարանաց անդանդաղ»: ՏԵՂ. «ի ս՟բ և յաշխարհամուտ յաթոռս Հռոմկլա, ընդ հովանեաւ ս՟բ Լուսաւորչին մերոյ և ա՟ծընկալ ս՟բ Նշանիս»: ԺԱՄԱՆԱԿ. 1253 Թ. փրկչական. «Արդ գրեցաւ ս՟բ աւետարանս, ի Թուականութեանս հայոց: ՉԲ»:

Նկարուած է 574 եր. Յիշատակարանից հատուած և Կոստանդին կաթուղիկոսի ձեռքը. (տես և Ալիշան. Սիսուան 545): Տախտ. ԽԵ.

**82.** Մատ. Երուս. Ս. Յակ. № 251. Աւետարան, ոսկէնկար. կաշէկազմ, Շղթայակրի ժամանակից. 27×19 սմ.: Մագաղաթ. ընտիր, «մագաղաթ պայծառ». երկիջեան: ԳԻՐ. Հրաշալի բոլորգիր. ԳՐԻՉ. Թորոս Ռաւսլին?: Նկարիչ. Թորոս Ռաւսլին. «Ուստի և իմոյ անարժանութե՟ս Թորոսի, մականուն Ռաւսլին կոչեցելոյ հրաման տայր (Կոստանդին կաթ.) զգործի գրչութե՟ ի գործ արկանել յա՟ծապարգև այս մատեան ս՟բ աւետարանիս, առատաձեռն ծախիւք, զանազան նիւթաւք և երփն երփն գունաւք վայելչացուցանել զսա, որ և ես ըստ կարի իմում լցի զփափաք նորա» 320ա: ՍՏԱՑՈՂ. Կոստանդին կաթուղիկոս. «Հրամանաւ և ծախիւք արի երջանկին և երիցս երանելոյ սր-



բազանի և ա՟ծապատիւ Տ՟ն Կոստանդեայ կաթողիկոսին ամենայն Հայոց», որ «ունէր և զգրասիրութե՟ շնորհս»: ՏԵՂ. «յա՟ծապահ դղեակս Հռոմկլա, ընդ հուանեաւ (sic) սրբոյ Նշանիս Վանգոյ և սրբոյ տաճարացն, որ յանուն ս՟բ Փրկչին և սրբոյ Ա՟ծածնին և սրբոյն Գրիգորի լուսաւորչին և այլ բազմահաւաք սրբոցս, որ պաշտին աստ»: ԺԱՄԱՆԱԿ. 1260 Թ. փրկչական. «յամի ևւԹն հարիւր և իններորդի Թուաբերութե՟ս հայոց»:

**Ծանօթ.** Կիլիկեան շրջանի Հայ գրչութեան գեղեցիկ գործերից մէկը իւր գրով, փառագրերով և պայծառ ու երփներանգ նկարչութեամբ: Ոսկին գործադրուած է մեծ քանակութեամբ: Մեր նկարը Ձօնի մի երեսն է 14ա. (միշտ երկու երեսից բաղկացած և Կիլիկեան շրջանի փառազարդ ՁՁ.-ում ընդհանրացած, յատկապէս Ռոսլինի դպրոցում). ոսկի մակերևոյթի վերայ, կարմիր տողերի մէջ, գիրը կապոյտ, սպիտակ գծիկով եզերուած: Տարաբաղդաբար իսկականի չափը չունիմ նշանակած: Տախտ. ԾԴ.

**83.** Մատ. Եր. Ս. Յակոբ. № 2660/105, Աւետարան նկարազարդ: Կազմն արծաթապատ, նոր. $22^{1}/_{2}\times18^{1}/_{2}$ սմ.: Ընտիր մագաղաթ, 290 Թերթ.: ԳԻՐ. Մաքուր բոլորգիր, երկիջեան, $16^{1}/_{2}\times5^{1}/_{2}$ սմ. ներքևի ծանօթութեան հետ: ԳՐԻՉ. Աւետիս գրիչ և քահանայ աւետարանների համար. տ. 139, 224ա.: Իսկ յիշատակարանի գրիչն է Թորոս Ռոսլին, նշանաւոր մանրանկարիչը այս և ուրիշ ձեռագիրների: ՍՏԱՑՈՂ. «Ծիրանածին պարոն Լևոն», «իշխանաց իշխան», «որդի ք՟աջապսակ ս՟բ արքային Հեթմոյ». 288բ. ՏԵՂ. Յիշատակարանը, որից և մեր նկարը, գրուած է Հռոմկլայում. «Ընդ հովանեաւ ս՟բ և ա՟ծաբնակ տաճարացս, որ յանուն ս՟բ Փրկչին և սրբոյ Ա՟ծածնին և սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, և այլ ևս բազմահաւաք սրբոցս, որ պաշտին յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա»: ԺԱՄԱՆԱԿ. 1262 Թ. փրկչական. «յամի ևւԹն հարիւրերորդի տասն և մի երորդի Թուաբերութեանս հայոց». «ի հայրապետութեանն տ՟ն Կոստանդեայ սրբազան կաթուղիկոսի Հայոց և ի բռնակալութեան ազգին Նետողաց, որք կոչին Դադար»:

**Ծանօթ.** Մանրանկարներից կարևորագոյնը Լևոն Գ-ի և իւր մատաղահաս Թագուհու պատկերներն են, Թագաժառանգ ժամանակ: Աւետարանիչների պատկերները յետին գործ են, Թղթի վերայ: Առաջին կազմողը, գրութեան ժամանակից, եղել է Առաքել Հնազանդենց, որի անունը յաճախ յիշւում է ՁՁ-ի մէջ, իբրև նշանաւոր կազմարար: Հանդ. Ազգագր. XX. 1910. Յօդ. Մեսրոպ եպիսկ.

Նկարուած է յիշատակարանից 285բ. Թորոս Ռոսլինի ձեռքը, մի ամբողջ երես. բնագիրը $16^{1}/_{2}\times10^{1}/_{2}$ սմ., մեր նկարը $12^{1}/_{2}\times8,7$ սմ.: Տախտ. ԿԳ.

**84.** Մատ. Ս. Էջմ. № 928/823 (Կար. 908) Առ որս Աստուածաբանի. թուղթ, $16,8\times12^{1}/_{2}$ սմ, 172 Թերթ: ԳԻՐ՝ Խոշորաձև բոլորգիր՝ մի իջեան, $13,8\times9,8$ սմ.: ԳՐԻՉ. Յովհաննէս սարկաւագ, որի ուսուցիչն է «վարդապետն տ՟ր Յովաննէս» . . . որ սպանեալ եղև յանաւրինաց»: Առաջին ուսուցիչն է «հայր Յակոբ»: Գրչի ծնողներն են Շիրին և Սափիրա, եղբայրները Աւետշահ և Շահնշահ: Գրչի առաջին գիրն է սա: ՍՏԱՑՈՂ. Հաւանօրէն Յովհաննէս վարդապետ, գրչի ուսուցիչը, որովհետև գրուած է ի վայելումն «հոգևոր հաւր վարդապետին և ուսուցչին», անունը ջնջուած: ՏԵՂ. Եկեղեաց գաւառի Երզընկա քաղաքում, «Ընդ հովանեաւ ս՟բ Փրկչիս»: ԺԱՄԱՆԱԿ. 1266 Թ. փրկ-

չական. «ի թուականութեանս հայոց ․ՆԾ․ ու ի Ժ՟Ե, ի հայրապետութեանն տ՟ն Սարգսի մարհասխայի մեծի». (տես. լուսանկարը)․

Նկարուած է յիշատակարանը 171բ., բնագիրը $13\times9{,}2$ սմ. առանց վերջին տողի, «յիշեայ» և՟ն. մեր նկարը $14{,}4\times10{,}1$, ուրեմն բնագրից քիչ մեծ։ Տախտակ ԾԴ։

**85. 86.** Մատ. Ս. Էջմ. Տաթև 9/4139. Տօնապատճառ Վարդանայ վարդապետի. թուղթ, $25\times17$ սմ., 517 թերթ։ Գիր. արևելեան բոլորգիր, յատկապէս Տիրացու գրչինը. մի իջեան, $19\times11{,}8$ սմ.։ Գրիչներն են Յովսէփ և Տիրացու. վերջինս Վարդան վարդապետի՝ գրքի հեղինակի՝ աշակերտը, «ի Վանանդ գաւառէ, ի Կարս քաղաքէ»։ Սորա գրածն է նաև Ս. Էջմ. Մատենադարանի № 1204/1119։ ՏԵՂ. Հաղբատ, «ընդ հովանեաւ տեղերալոյս տ՟րունական ս՟բ և ա՟ծընկալ Նշանիս և . . . Ա՟ծածնիս». 516բ.։ ԺԱՄԱՆԱԿ. 1267 թ. փրկչական. «(ի թուակա)նութե՟ս Հայոց ՉԺԶ», «յաթոռակալութե՟ն տ՟ր Յո՟վ, մեծի հռետորի և ս՟բ վերադիտողի», որ Հաղբատայ վանահայրն է։

Նկարուած է ա) 114ա. Յովսէփ գրչի. բնագիրն է $13{,}2\times11{,}8$ սմ., մեր նկարը $10{,}8\times9\frac{1}{2}$ սմ։ Տախտ. ԾԷ.

բ) 292ա. Տիրացու գրչի. բնագիրը $19\frac{1}{2}\times11{,}8$ սմ., մեր նկարը $14{,}2\times8{,}2$ սմ։ Տախտ. ԿԸ.

**87.** Մատ, Ս. Էջմ. Գ .№ 295/3082. Տօնապատճառ, թուղթ, $20\frac{1}{2}\times16$ սմ., թերթ 477։ ԳԻՐ. Բոլորգիր, մի իջեան, $16\frac{1}{2}\times11\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉ. Սկեռայի գրչութեան դպրոցի նշանաւոր ուսուցիչ Գէորգ Լամբրոնացին, պատանեկութեան հասակում, երբ Կիլիկիայից գալով աշակերտում էր Վարդան վարդապետին Խոր վիրապում։ ՍՏԱՑՈՂ. Գրիգոր վարդապետ, «սպասաւոր բանի», եղբայր վերոյիշեալ Վարդանայ վարդապետի։ ՏԵՂ. Սկսած է Խոր վիրապում, շարունակել է Սաղմոսավանքում և վերջացրել Թեղենեաց վանքում։ ԺԱՄԱՆԱԿ. 1268 թ. փրկչական. «ի շրջագայութե՟ ամանակաց թուաբերութե՟ հայկականս ազին տումարի յարաբարդեալ ամաց չորեքտասան յիսնեկաց՝ հանդերձ առաջին կատարեալ թուով վեցեկաւ ընդ տասնեկի շարամանելոյ»։

**Ծանօթ.** Գրիչը հատուածների վերջում, երբեմն, գրում է յունարէն. օր. 138 κε ελεησον γοργη. Յիշատակարանից կարևոր քաղուածներ Գրչի, Ստացողի, Վարդան վարդապետի մասին, և՟ն, տես «Շողակաթ» հայագիտական ժողովածու. Գիրք. Ա. 1913. 31—32.

Նկարուած է 476ա. յիշատակարանից. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։ Տախտ. ԾԵ.

**88.** Մատ. Ս.Էջմ. № 222/287 (Կ. 215), Աստուածաշունչ թերի, սկսւում է Յոբից. $21\times15$ սմ., 287 թերթ. Ընտիր մագաղաթ, մակերևոյթը ողորկ և շոշափելիս դուրեկան։ ԳԻՐ. Գեղեցիկ բոլորգիր, երկիջեան, $16\frac{1}{2}\times5$ սմ.։ ԳՐԻՉ. Կոստանդին քահանայ գրիչ։ ՍՏԱՑՈՂ. Պետրոս (քահանայ կամ կրօնաւոր), «որ ետ գրել զսա ի վարժումն անձին իւրոյ և ծնաւղաց իւրոց և բնաւ զարմին»։ Պետրոսը իւր կողմից խնդրում է յիշել ոմն քահանայապետի, որ իւր ուսուցիչն է եղել «եւ բազում սատարութի՟ս ընձեռեաց մեզ ընչիւք և աւրինակաւ»։ Տարաբաղդաբար ուսուցչի անունը քերուած է յիշատակարանի մէջ։ Ժամանակի կաթուղիկոսն էլ (Կոստանդին Բարձրբերդցի՞, թէ Յակոբ Կլայեցի)



«մասնաւոր աւգնեաց մեզ»։ ԺԱՄԱՆԱԿ. 1268 թ. փրկչական. «Արդ գրեցաւ սա ի թվիս հայոց ՉԺԸ, ի թա՟գաւութե՟ն Հեթմոյ բարեպաշտի, ի դիտապետութե՟ն Տ՟ն Յակովբայ (ընդգծուածը յետին գրչով քերուածի վերայ), որ յայսմ ամի կարգեցաւ առաջնորդ ս՟բ եկեղեցւոյ հայկազեան քրիստոնէիցս և յաջորդ աթոռոյ ս՟բ լուսաւորչին մերոյ Գրիգորի. յամսեանն փետրվար, որ աւր ԺԲ էր»։

**Ծանօթ.** Վերնագրերը կարմրադեղով. պարբերութիւնների սկզբնատառերը կարմիր երկաթագիր. գլուխների առաջին գիրը գծական—բուսական զարդագիր, միագոյն, բաց կինեմոնագոյն։ Թուականի տասնաւորը քերուած է յիշատակարանի մէջ. պէտք է լինի Ժ, որով և ՉԺԷ թուականը համապատասխան կլինի Յակոբ Կլայեցու կաթուղիկոսութեան առաջին տարուան, համաձայն յիշատակարանի։

Նկարուած է 219ա. բնագիրը $11\times11$ սմ., մեր նկարը $10\times10$ սմ., քիչ փոքր բնագրից։ Տախտ. ԾԹ.

**89.** Մատ. Ս. Էջմ. Գ. № 359/2627։ Աստուածաշունչ, նկարազարդ, նուրբ մագաղաթ. 541 թերթ։ ԳԻՐ. բոլորգիր փոքրատեսակ, երկիջեան, $19\times5\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉՆԵՐ. Յակոբ 141բ և Սարգիս քահանայ (Պիծակ). 259ա, 284ա. վերջինս և Նկարիչն է. նա գրել է Նեեմիից մինչև վերջը։ ՍՏԱՑՈՂ և ԺԱՄԱՆԱԿ. Յակոբ կաթուղիկոս Կլայեցի (1268—1287)՝ հաւանօրէն վաթսունական թուականների վերջերին, երբ արդէն Սարգիս Պիծակ ծեր էր։ Գուցէ Յակոբ գրիչն էլ նոյն լինի ստացողի հետ, որ գրել է կաթուղիկոս դառնալուց առաջ։ Ստացողի յիշատակարաններ. 309բ։ 399բ. ԿԱԶՄՈՂ. Յովհաննէս սարկաւագ, 541ա., գրութեան ժամանակից՝ նշաններից դատելով։

Վերջին նուիրատուն՝ Եւգինէ տիկին, քոյր Գէորգ Դ. կաթուղիկոսի։

Նկարուած է միայն Սարգիս քահանայի գիրը. 445բ. բնագիրը $19\times5\frac{1}{2}$ սմ,, մեր նկարը $11\times3$ սմ։ Տախտ. Հ.

**90.** Մատ. Ս. Էջմ. № 365/382 (Կ. 358), Աւետարան. թուղթ, $34.2\times25{,}2$ սմ.։ Թերթ 353։ ԳԻՐ. Անցման, խոշոր, արևելեան բոլորգիր, որ Մեծ Հայքում ԺԳ. դարում և մասամբ յետոյ գործածւում էր երկաթագրի փոխարէն։ Երկիջեան $25{,}7\times6{,}7$ սմ.։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Առաքեալ քահանայ. ՏԵՂ. Աստապատ գիւղաքաղաք, ընդ «հովանեաւ ս՟բ Վարդանիս»։ ԺԱՄԱՆԱԿ.«(ե)աւթն հարիւր տասն ութ»=փրկչական 1269 թ.։

**Ծանօթ.** Թուականի հարիւրաւորը «եաւթն» է և ոչ գաւառաբարբառով «աւթն»=ութ, որովհետև յիշատակարանի համեմատ Աւետարանիս ստացող Առաքել քահանան մանկութեան հասակում Կարնոյ քաղաքում գերի է ընկնում Թաթարների ձեռքը և Թաւրէժ բերւում, որտեղից ապա ազատուելով անցնում է Գառնի ուսանելու և այնտեղից Աստապատ իբրև քահանայ։

Նկարուած է 187բ., բնագիրը $14{,}3\times6\frac{1}{2}$ սմ., երկրորդ տողից. մեր նկարը $15{,}3\times6{,}9$ սմ., քիչ մեծ բնագրից։ Տախտ. ԿԴ.

**91. 92.** Մատ. Երուս. Ս. Յակ. № 2563/8., Աւետարան, ոսկէկազմ, Շղթայակրի ժամանակից, $37{,}7\times24$ սմ., մէջքը, 9,2 սմ.։ Ճոխ նկարներով և

լուսանցքի զարդերով: Մաքուր մագաղաթ, կաթնագոյն, լայն լուսանցքներով. 382 թերթ: ԳԻՐ. Ընտիր, խոշորաձև բոլորգիր, երկսիւն, 21½×6,8 սմ.: ԳՐԻՉ. Աւետիք քահանայ, 373ա. 376ա. ՍՏԱՑՈՂ. Կեռան, թագուհի Լևոն Գ-ի, դուստր Հեթմոյ, թոռն Կոստանդեայ Լամբրոնացւոյ, որդւոյ «մեծին Հեթմոյ Սևաստոսի եղբօր տ՟ն Ներսէսի». Յիշատակարան 372բ.-378ա.: Նուիրուած է Ակների վանքին: ԺԱՄԱՆԱԿ. 1272 թ. փրկչական. «Արդ գրեցաւ սա ի թուականութե՟ն հայկազնեա տումարիս ՉԻԱ, ի թագաւորութեան Հայոց Լևոնի ա՟ծասիրի և ի հայրապետութ՟ե տ՟ն Յակովբայ»:

**Ծանօթ.** Գեղեցիկ են մանրանկարչական փառագրերը: Բազմաթիւ զարդերի և մանրանկարների հետ նաև Լևոն Գ-ի, Կեռան թագուհու և զաւակների նկարը 380ա: Տես նաև յօդ. Մեսրոպ եպիսկ. Ազգ. Հանդ. XX. 1910.

Նկարուած է, ա) 189բ., բնագիրը, առաջին տող. 6,8 սմ., մեր նկարը 3,7 սմ., գրեթէ նոյն մեծութեամբ, Տախտ. ԾԸ.

բ) Աւետիս գրչի յիշատակարանից. 378ա. բնագիրը և նկարը գրեթէ նոյն մեծութեամբ: տախտ. ԾԹ.

**93. 94.** Մատ. Ս. Էջմ. Գ. շար. № 1360/3710 (առաջնորդականութիւն Երևանի կաթուղիկէ եկեղեցւոյ). Ժողովածու, որի մէջն է և «Ցոյցք առաքելականք» Իրենիոսի: Թուղթ, 25×16 սմ., թերթ 383: ԳԻՐ. բոլորգիր, լաւ, կանոնաւոր գրչութիւն, միջեան, 19½×11,2սմ. ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Յովհաննէս արքայեղբայր (տես. Տախտակ ԿԷ. պատ. 94. յիշատակարանը): Մի մասի գրիչն է Թորոս. «այ եղբայր, յիշեա զիս զԹորոս ի տ՟ր ք՟ս» 294ա: ԺԱՄԱՆԱԿ. Թիւ չկայ ձեռագրում, բայց գրուած է Կոստանդին թագապահի և Հեթում Ա-ի մահուանից՝ 1270 թուից յետոյ: Յովհաննէս արքայեղբայրը վախճանուած է 1293 թուին (Ալիշ. Սիսուան 147, բայց կենդանի էր ՉԽԲ թուի ձմեռը. Երուս. Ս. Յակ. 2612/57): Ուրեմն գրուած է 1270—1293 թ. թ. մէջ:

**Ծանօթ.** Ձեռագիրս unicum է Իրենիոսի «Ցոյցք առաքելականք»-ով: Նկարագրութիւնը տես Des Heiligen Irenäus Schrift der apost. Verkündigung. Lic. Dr. Karapet Ter-Mekerttschian u. Lic. Dr. Erwand Ter-Minassiantz. Leipzig. 1907.

Նկարուած է ա) բուն Ձեռագրից 222ա. բնագիրը 17½×8,2 սմ., մեր նկարը 11×5,1 առաջին տողը: Տախտ. Կ.

բ) Յիշատակարանը 28բ, բնագիրը 8×11 սմ., մեր նկարը քիչ փոքր, 6½×9,2սմ. Տախտ. ԿԷ.

**95. 96.** Մատ. Ս. Էջմ. № 1446/1328 (Կ. 1410). Մեկնութիւն ժամագրոց Խոսրովու Անձևացւոյ, Յաղագս զարմից Ս. Գրիգորի և Պատմ. Ներսէսի Հայոց Հայրապետի, Ջենոբ Գլակ: Թուղթ, 25×17 սմ. ԳԻՐ. Արևելեան մեծ բոլորգրով, խրատեսակ գեղեցկութեամբ. միջեան 20½×11 սմ.: ԳՐԻՉ. Մկրտիչ քահանայ 176ա: ՍՏԱՑՈՂ. Տիրատուր, վանահայր Սաղմոսավանից. «հրամանաւ և արդեամբ» «Տ՟րատրոյ, վերակացուի իշխողի և իշխեցելոյ վանաց, որ և Սաղմոս կոչի» 176ա. 307.: ՏԵՂ. «Ի գեղաքաղաքիս Կարփի, ընդ հովանեաւ ս՟բ Ա՟ծածնիս և ս՟բ վկայարանիս Կիւրակոսի և Յուղիտեա»: ԺԱՄԱՆԱԿ. 1278 թ. փրկչական. «ի Թվականութե՟ս հայոց ՉԻԷ»:



Նկարուած են 96բ և 176ա.

ա) Բնագիրը 19,1×11 սմ. երկրորդ տող. մեր նկարը 13½×7½ սմ.: Տախտ. ՀԴ.

բ) Յիշատակարանից. բնագիրը 11×11 սմ. մեր նկարը 11,2×11,5 սմ. Տախտ. ՀԱ.

**97. 98.** Մատ. Ս. Էջմ. № 680/759 (Կար 666): Մանր ուսմունք, կաշեկազմ, 7½×11 սմ., մագաղաթ. 7½×11 սմ. թերթ 181 հինը: ԳԻՐ. Սքանչելի բոլորգիր (տես մանաւանդ յիշատակարանը, նկարը Տախտ. ԾՋ.) ձայնանիշներով, միջեան, 8½×5 սմ.: ԳՐԻՉ. Ստեփանոս քահանայ (ժամանակով և տեղով յարմար նոյնացնելու Գոյներիցանցի հետ, թէպէտ գրի ընոյթն ուրիշ): ՍՏԱՑՈՂ. Ստեփանոս քահանայ «պատուական հոգևոր եղբայր մեր (գրչի)». ստացողի եղբայրներն են Կոստանդին քահանայ, Կիւրակոս, Յովսէփ սարկաւագ: Սրանց խնամող և ուսուցիչն է «պատկառելի քահանայ և պատուելի ծերունի Դաւիթ»: ՏԵՂ. «Ի հռչակաւոր անապատս Սկևռայ, ընդ հովանեաւ ս՟բ Փրկչի. և մաւր լուսոյ Ա՟ծածնի և կենսակիր ս՟բ Նշանիս, մերձ յանմատոյց դղեակս Լամբրոնի, որ է գլուխ Տարսոնի և ի ստորոտ մեծի լերինն Տաւրոսի. ի լաւ և յընտիր աւրինակաց»: ԺԱՄԱՆԱԿ. 1278 թ. փրկչական. «ի Թուիս հայոց ՉԻԷ» տես. նկար 98. Տախտ. ԾՋ.,

Նկարուած են. ա) 67ա. բնագիրը. 8,1×4,6 սմ., մեր նկարը 8,5×4,7 սմ., գրեթէ նոյն մեծութեամբ: բ) 180բ. բնագիրը 8,1×5 սմ., մեր նկարը 7,7×4,7. սմ., գրեթէ նոյն մեծութեամբ, քիչ փոքր: Տախտ. ԾԷ. և ԾՋ.

**99.** Մատ. Ս. Էջմ. № 1556/1563 (Կ. 1518). Նարեկ. թուղթ. 17×12,3 սմ. թերթ 399: ԳԻՐ. Արևելեան բոլորգիր (երկաթագրախառն), միջեան, 12×8½ սմ: ԳՐԻՉ. Մարտիրոս: ՏԵՂ. «ի վանս Վանական վարդապետ(ի), առաջ-(նորդ գո)լով Պետրոս վարդապետի», Խորանաշատու վանք: ԺԱՄԱՆԱԿ. 1283 թ. փրկչական. «ի ՉԼԲ թվիս գրեցաւ գիրքս Գրիգորի Նարեկեցի» (sic).

Նկարուած է 312բ., բնագիրը 8,2×8½ սմ., մեր նկարը 8,1×8,4 սմ., գրեթէ հաւասար մեծութեամբ: Տախտ. Կ.

**100.** Մատ. Երուս. Ս. Յակ. № 2568|3., Աւետարան նկարազարդ, կազմը արծաթապատ, նոր. ՌՃՂԹ. թուականից. 25½×19 սմ.: Մագաղաթ, շատ աղնիւ: ԳԻՐ. Սիրուն բոլորգիր, երկսիւն, 16½×5 սմ., առանց մանր ծաղկանց նոթութեանց ներքևում: ՍՏԱՑՈՂ. Վասակ արքայեղբայր, «տէր Ճանճոյն», Կոնստանդին թագապահի որդին: ԺԱՄԱՆԱԿ. 1270—1284 թ. թ. մէջ. Վասակ արքայեղբօր մահը «ՉԼԳ», «ի մարտի ամսոյ ի ԺԳ» (տես. Ձեռ. Ս. Էջմ. մատ. № 226|195, 118բ. յիշատակարանը):

Ծանօթ. Ձ-ը մէկն է ԺԳ. դարու գրչութեան կարևոր հնացորդներից՝ մանրանկարների և փառագրերի ճոխութեամբ: Մանրանկարներից նշանաւորագոյնն է ստացողի և իւր երկու որդւոց պատկերները, որոնց տակն էլ Յովհաննէս արքայեղբօր մակագրութիւնն է, մեր նկարը, 320ա:

Բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ: Տախտ. ԾՋ.

**101.** Մատ. Ս. Էջմ. № 944/1500 (Կ. 924). «Ճառընտիր Մխիթար Այրիվանեցու» անունով յայտնի. Ժողովածու թարգմանական փիլիսոփայական,

Հին և Նոր Կըտակարանի, Ժամագրքի և ուրիշ բազմաթիւ մեկնաբանական գրքերի։ Թուղթ. վատ $35\frac{1}{2}\times24\frac{1}{2}$ սմ. քառածալ, 1188 թերթ. երկսիւնեան, խորաքանչիւրը $28\frac{1}{2}\times9{,}8$ սմ.։ ԳԻՐ. Անցման բոլորգիր, մօտ շղագրին։ ԳՐԻՉՆԵՐ. Մխիթար վարդապետ. (Այրիվանեցի) և Սարգիս «... Ողորմեսցի ք՞ս ա՞ծ տ՞ր Մ՞խ վ՞դիս գծաւղի և ստացչի. $40^{ա}$, տես և 879. Լուսանցքում $723^{բ}$. «զՍարգիս գրիչ առ ք՞ս յիշեայ», գրուած կարմիր թանաքով, բնագրից տարբեր, կանոնաւոր բոլորգրով։ Հաւանօրէն լուսանցքների զարդագրողը կարմիր թանաքով, Սարգիսն էր։ ՍՏԱՑՈՂ. Գրիչ Մխիթար վարդապետ Այրիվանեցին, որ արքեպիսկոպոս էր ըստ $79^{ա}$. «Գոհութիւն և փառաբանութիւն» քարոզի մէջ եղած յիշատակութեան։ ԺԱՄԱՆԱԿ. Ձեռագրում թիւ չկայ նշանակուած, բայց նոյն քարոզի մէջ յիշուած են Յակոբ կաթուղիկոս (1268—1287), Լևոն Գ. թագաւոր Հայոց (1270—1289), Դեմետր Վրաց թագաւոր (1270—1287). ուրեմն գրուած է 1270—1287 թ. թ. մէջ։

Նկարուած է $1164^{ա}$. բնագիրը $12\times9{,}8$, լուսանկարը նոյն մեծութեամբ։ Տախտ. ՀԲ.

**102**. Մատ. Ս. էջմ. № 892/979 (Կար. 873). Ճաշոց Հեթում թագաւորի, նկարազարդ, աղնիւ մագաղաթ, $33\frac{1}{2}\times24\frac{1}{2}$ սմ., 476 թերթ։ ԳԻՐ. Բոլորգիր, հաստ, գեղեցիկ և կանոնաւոր, երկսիւնեան, $25{,}2\times7\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉՆ ու ՆԿԱՐԻՉԸ տարաբաղդաբար անյայտ։ ՍՏԱՑՈՂ. Հեթում Բ. թագաժառանգ ժամանակ. «հրամանաւ ա՞ծասէր և ամենիմաստ պարոնին Հեթմոյ, որդւոյ ք՞սապսակ ս՞բ արքային Լևոնի»։ ԺԱՄԱՆԱԿ. 1287/8 թ. փրկչական. «ի թուականութեանս հայոց ՉԼԷ յանկ ելեալ կատարեցաւ ա՞ծախաւս մատեանս»։ Յիշատակարան $469^{ա}$.

Ծանօթ. Հայ գրչութեան գլուխ գործոցներից մէկն է այս Ձեռագիրը՝ մանրանկարների և գրերի կամ զարդագրերի պէսպիսութեամբ ու գեղեցկութեամբ։ Մեծ տօների ընթերցուածների սկսուածքները զարդարուն և առաջին տողերը սիրուն փառագրերով. սովորական ընթերցուածների սկսուածքը սքանչելի զարդագրով կամ թռչնագրով, պարբերութիւնների սկզբնագրերը, ընթերցուածների առաջին տողերը երկաթագիր, երկրորդը բոլորագիր, բայց ոսկով։

Նկարուած է $415^{ա}$. բնագիրը $15{,}7\times7{,}8$ սմ., մեր նկարը $10\frac{1}{2}\times5$ սմ.։ Տախտ. ԿԹ.

**103**. Մատ. Ս. էջմ. № 226/195 (Կ. 219). Աստուածաշունչ (ոչ լիակատար). Ընտիր մագաղաթ, հարթ և փայլուն մաքուր մնացած տեղերում. $24{,}6\times16\frac{1}{2}$ սմ.։ ԳԻՐ. Սքանչելի բոլորգիր։ ԳՐԻՉ. «Անարհեստ գրիչ Կոստանդին ծառայ և աշակերտ վերասացեալ տ՞ն իմում» (այսինքն Յովհաննու արքայեղբօր) $195^{բ}$։ Անյայտ գրչի գործ են 364—406 թերթերը, որոշ չափով նմանութիւն ունիՍտեփանոսի՝ Հեթում թագաւորի Աստուածաշնչի գրչի հետ, բայց պնդել դժուար է։ ՍՏԱՑՈՂ. Յովհաննէս արքայեղբայր։ Մի քանի տեղ իւր իսկ ձեռքով յիշատակարաններ գրած. $370^{ա}$. $403^{ա}$. ԺԱՄԱՆԱԿ 1284—1288 փրկչ. «ի թվա հայոց ՉԼԷ գրեցաւ»։ ՏեՂ. Սիս—Ակներ։ ?

Ծանօթ. Պարբերութիւնների գլխատառերը, հատուածների սկզբնագիր փառագրերը և լուսանցքի սկզբնազարդերը կարմրադեղով։ Շքեղ չէ, բայց ընտիր գրչութիւն է։

